29 ՓԵՏՐՈՒԱՐ 2012 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 36(4888)

Azg Ազգ

ISSN: 1829-1651

Եվրոմիության՝ Ադրբեջանին ուղղված «կսոցները»

ԵՄ ներկայացուցիչների առանց նախապայմանների մուտք Լեռնային Ղարաբաղ եւ հարակից շրջաններ

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվրոմիությունը, ինչպես եւ հայտարարվել էր, հարավկովկասյան հակամարտությունների, այդ թվում՝ ղարաբաղյան հարցի կարգավորման գործում առավել ակտիվ դերակատարություն է ցանկանում ստանձնել, եւ փաստացի առաջին որոշակի քայլերն անում է այդ ուղղությամբ:

Փետրվարի 27-ին ԵՄ-ի արտաքին հարցերով խորհուրդը, ի շարս Սերբիայի, Կոսովոյի, Սիրիայի, Բելառուսի եւ այլ հարցերի, անդրադարձել է նաեւ հարավկովկասյան երկրներին ու նրանց հետ համագործակցությանը՝ «Եզրահանգումներ Հարավային Կովկասի առնչությամբ» փաստաթղթով: Եզրահանգումներից վերջին 25-ը՝ «Տարածաշրջանում հակամարտությունների խաղաղ կարգավորում» բաժնում հետաքրքրական ամրագրում է արել՝ մատուցելով որպես ամբողջական աջակցություն Մինսկի խմբին ու վստահության միջոցների հիմնմանը:

«ԵՄ-ն ընդգծում է իր ներկայացուցիչների համար Լեռնային Ղարաբաղ եւ հարակից շրջաններ առանց նախապայմանների մուտքի անհրաժեշտությունը»: Ավելին, ԵՄ 27 երկրների արտգործնախարարների խորհուրդը կոչ է արել ԵՄ արտաքին անվտանգության քաղաքականության հարցերով բարձր ներկայացուցիչ Քեթրին Էշթոնին եւ Եվրոհանձնաժողովին՝ «ԵԱՀԿ-ի հետ սերտ համագործակցությամբ զարգացնել հետհակամարտային սցենարներ Լեռնային Ղարաբաղի համար՝ որպես ԵՄ հետագա փոխգործակցության հիմք»:

Այս հարցում Եվրոմիությունը կարծես հետեւողական է իր իսկ ընդունած նախկին փաստաթղթերում նշված ցանկությունների, որոնցից մեկն էլ ղարաբաղյան իշխանությունների հետ ԵՄ շփումների հաստատմանն էր վերաբերում: Մյուս կողմից, ակնհայտ է, որ այս ամենն ուղղված է Ադրբեջանին, որի անզիջում կեցվածքի պատճառով Արցախ բոլոր օտարերկրացի այցելուները այդուհետեւ անցանկալի անձ են հայտարարվում: Բացի դրանից, ԵՄ-ն ըստ էության շեշտում է, որ առանց ղարաբաղյան կողմի հետ համագործակցության ոչ մի տեղ էլ չեն տանի ոչ բանակցությունները, ոչ էլ կարգավորման որեւէ փորձ:

Տես էջ 2

Հոլոքոստի դեմքում՝ սահմանադրական, Հայոց ցեղասպանության պարագայում՝ հակասահմանադրական...

Սարկոզին հանձնարարեց նոր օրինագիծ պատրաստել

Փարիզից **Ժան Էսֆիյանը** «**Ազգին**» տեղեկացնում է, որ երեկ Ֆրանսիայի Սահմանադրական խորհուրդը դեմ է քվեարկել Հայոց ցեղասպանության ժխտումը իրականացնելու մասին նույն երկրի Սենատի 2012 թ. հունվարի 23-ի օրինագծին, այն համարելով հակասահմանադրական, պատճառաբանելով, որ պատգամավոր Վալերի Բուայեի հեղինակած օրինագիծը իբր սահմանափակում է խոսքի ազատությունը:

Հիշեցնենք, որ նախագահ Նիկոլա Սարկոզին օրինագծի սահմանադրականության մասին 65 սենատորների կողմից Սահմանադրական խորհրդին դիմելու առթիվ հայտարարել էր, որ օրինագծի մերժման դեպքում նորն է մցնելու խորհրդարան, միաժամանակ առաջարկելով խորհրդին ստուգել հրեական Հոլոքոստի մասին գործող նմանօրինակ օրենքի սահմանադրականությունը:

Ավելի ուշ Փարիզի մեր թղթակիցը տեղեկացրեց, որ նախագահ **Սարկոզին** երկրի կառավարությանը հանձնարարել է օրինագծի նոր տեքստ պատրաստել՝ հաշվի առնելով Սահմանադրական խորհրդի որոշումը: Նախագահն իր այս նախաձեռնությանը հանգել է խորհրդարանական հանրաքվեի կողմնակիցների հուսախաբությունն ու կսկիծը, միաժամանակ հասկանալով, որ ցեղասպանության ժխտումը ոչ միայն վիրավորում է զոհերի հիշատակը եւ նրանց հետնորդների արժանապատվությունը, այլեւ սպառնում է համայնքին:

Ադրբեջանական կեղծիքը անկառավարելի չափերի է հասնում

Լիդիցեն ու Խոջալուն երբեք քաղաքներ չեն եղել

ՀԱԿՈԲ ԱՍԱՏՐՅԱՆ
Դրեսդեն

Ադրբեջանը պետական մակարդակով շարունակում է լայնածավալ քարոզչություն ծավալել եւ աբխազիին ներկայացնել Խոջալուի ողբերգությունն իբրեւ ցեղասպանություն՝ հակահայկական մտածողություն արմատավորելով ոչ միայն ադրբեջանցիների մատաղ սերնդի գիտակցության մեջ, այլեւ աբխազիի տարբեր երկրներում անցկացված միջոցառումների ընթացքում: Ադրբեջանական հեռուստատեսության այս տարվա միջոցառումների լուսաբանումը դրա արտահայտությունն էր: Ցավոք, անցած քսան տարիների ընթացքում թե՛ Հայաստանի պետությունը եւ թե՛ հայկական լոբբիստական կազմակերպությունները մատների արանքով նայեցին ադրբեջանական քարոզչությանը հակադարձելուն, եւ միայն վերջին մի քանի տարիների ընթացքում պատրաստվեցին լուրջ ֆիլմեր ու տեղեկատվական գրքույկներ, որոնք ինչ-որ չափով կարող են պատասխանել ադրբեջանական կեղծիքին:

Տես էջ 8

Խորհրդարանական ընդդիմությունը՝ ՀՀԿ-ի 41-մանդատանոց բոնուսի դեմ

ՄԱՐԻԵՏԱ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ազգային ժողովի երեկվա իրադարձությունը, անշուշտ, խորհրդարանական ընդդիմության նախաձեռնությամբ որպես արտահերթ հարց 100 տոկոս համամասնական ընտրակարգի վերաբերյալ օրինագծի քննարկումն էր, որի մեջը խորհրդարանի ճաղերից դուրս պաշտպանում էր նախաձեռնողների աջակիցների բավական սվար մի խումբ՝ ՀՅԴ, ՀԱԿ եւ «Ժառանգության» ներկայացուցիչներ: Նրանք ելույթներ էին ունենում, գոչում կարգախոսներ, հարցազրույցներ տալիս:

Իսկ արդեն Ազգային ժողովի ներսում հարցը ներկայացվեց նույն շեշտադրումներով ու փաստարկներով, ինչ որ նույն հարցով տեղի ունեցած խորհրդաժողովի եւ խորհրդարանական լսումների մակարդակով է եղել, «**Ազգն**» էլ մանրամասնորեն լուսաբանել է:

Հիմնական զեկուցող **Արմեն Մարտիրոսյանը** հիշեց եւ «կոնսենսուս միանուս մեկը» (մեկը ՀՀԿ-ն է), եւ հարցի սացած քաղաքացիական աջակցությունը, եւ մեծամասնականով իշխանության վերարտադրության ապահովումը: Մինչդեռ ազատ ընտրության երաշխավորը, ըստ նրա, հենց 100 տոկոս ընտրակարգն է, որն ընդունելու դեպքում էլ ՀՀԿ-ին օգնություն է առաջարկվում ազատ-արդար-ժողովրդավարական ընտրությունների ապահովման եւ պետական համակարգի առողջացման համար: Առողջացումն, ըստ Մարտիրոսյանի (ՀՀԿ-ական Արտակ Զաքարյանի հարցին ի պատասխան մեկնաբանելով), Ազգային ժողովում հասարակության իրական ներկայացվածությունն է, ապաքաղաքական մեծամասնականներով մեծամասնության չարահովումը, իշխանությանը հակակշռող բավարար ընդդիմության ներկայությունը խորհրդարանում:

Տես էջ 2

ՌԴ առաջիկա նախագահական ընտրություններին նվիրված երեկո ՌՀՄ-ի կազմակերպմամբ

Փետրվարի 26-ին Լուժնիկիում՝ «Ռոսիա» պետական համերգասրահում տեղի է ունեցել ՌԴ առաջիկա նախագահական ընտրություններին նվիրված երեկո:

Ռուսաստանի հայերի միության հրավերով հանդիպմանը ներկա էին ոչ միայն մայրաքաղաքի, այլեւ ՌԴ տարածաշրջանների հայ համայնքի, ինչպես նաեւ ազգային երիտասարդական կազմակերպությունների ներկայացուցիչներ:

Երեկոյի մասնակիցները ջերմորեն ընդունեցին ՌԴ նախագահության թեկնածու Վ. Վ. Պուտինի վստահյալ անձ, ՌՀՄ նախագահ **Արա Աբրահամյանին**: Նա իր ելույթում ընդգծեց առաջիկա նախագահական ընտրությունների բախտորոշ նշանակությունը եւ կոչ արեց ամենայն ակտիվությամբ մասնակցել ընտրարշավին:

Նա նշեց, որ մարտի 4-ին երկիրը կընտրի ոչ միայն նախագահ, այլեւ այն ուղին, որով Ռուսաստանը կգնա առաջիկա տարիներին, շարունակելով զարգացնել երկրի տնտեսությունը, ամրապնդել պաշտպանունակությունը, կայունությունն ու միասնությունը, բարելավելով ժողովրդի նյութական բարեկեցությունը: Նա ընդգծեց, որ Վլադիմիր Պուտինն անգնահատելի ավանդ է ներդրել Ռուսաստանի ու Հայաստանի բարեկամական հարաբերությունների եւ ռազմավարական գործընկերության զարգացման մեջ:

Իրենց ելույթներում նրան պաշտպանեցին ՌԴ Հանրային պալատի անդամ **Անդրեյ Սոկոլովը**, ռուսական երիտասարդական եւ ազգային միավորումների ներկայացուցիչները, մշակույթի գործիչները:

Ներկաների լայն աջակցությանը եւ բուռն ծափահարություններին արժանացան ընտրական տեղամասեր գնալու եւ Վ. Վ. Պուտինի օգտին քվեարկելու կոչը եւ այնպիսի անվանի վարպետների հուզական ելույթները, ինչպիսիք են **Իոսիֆ Կոբզոնը, Վլադիմիր Սերովը, Նիկոլայ Ռաստորգուեւը** («Լյուբե» խումբ) եւ մյուսները:

«Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի պատվո մեդալը Զարաֆոլուին

«Դուռ» բազմամշակութային հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ երեկ, փետրվարի 28-ին, Ազգային գրադարանի դահլիճում տեղի ունեցավ արդեն 4 ամիս Թուրքիայի բանտերից մեկում գտնվող թուրք հասարակական գործիչ, հրատարակիչ եւ մարդու իրավունքների պաշտպան Ռագըփ Զարաֆոլուի զորակցության միամյա հանդիպումների եզրափակիչ միջոցառումը, որի բացման խոսքը ասաց «Դուռ» կազմակերպության տնօրեն **Հասմիկ Պողոսյանը**: Այնուհետեւ Զարաֆոլուի կենսագրական մանրամասնությունները ներկայացրեց **Սարգիս Հացպանյանը**: Ելույթ ունեցավ նաեւ «Հայոց ցեղասպանություն: Ականատես վերապրողների վկայություններ» կոթողային գրքի հեղինակ, բ. գ. դոկտոր **Վերժինե Սվազլյանը**: Վերջում գրող եւ թարգմանիչ **Գրիգոր Զանիկյանը** «Ֆրիտյոֆ Նանսեն» հիմնադրամի (տնօրեն՝ Ֆելիքս Բախչինյան) անունից, որպես այդ հիմնադրամի խորհրդի անդամ, հրապարակեց անվանի հրատարակչի մարդասիրական գործունեության համար նրան գթասրտության պատվո մեդալ շնորհելու հրամանագիրը:

Հ. Ծ.

ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Որտե՞ղ եւ ինչպե՞ս ապահովագրել Ձեր առողջությունը:

Այս եւ բոլոր այլ հարցերին՝
Սոցիալական փաթեթի մասին,
կպատասխանեն հեռախոսահամարով

59-21-21

ԻՆԳՈ ԱՐՄԵՆԻԱ
ապահովագրական ընկերություն

ԱԶԳ

ԸՆԹԱՑԻԿ

Կթանկանա նաեւ գիրքը

Օրենսդրական փոփոխությունների հետեւանքով տպագիր գրքերը կթանկանան, ավելի ճիշտ՝ արդեն թանկանում են: Խոսքը «Ավելացված արժեքի հարկի մասին» օրենքում փոփոխությունների մասին է, որոնք խորհրդարանը կասարեց անցյալ տարեվերջին:

«Բյուրոկրաս» գրախանութի տնօրեն **Հայկ Հովհաննիսյանն** ավելացնում է՝ օրենքում փոփոխություններ կասարվել են դեռ 2011 թվի սկզբին, երբ սկսեցին ավելացված արժեքի հարկ գանձել այն ընկերություններից, որոնք տարեկան ունեին գրքի՝ մեկ միլիոն դրամից ավելի իրացում: Իսկ անցյալ տարվա դեկտեմբերի փոփոխությունները, ըստ պարոն Հովհաննիսյանի, ենթադրում են գրքերի 20 տոկոս թանկացում:

Պարզաբանումներ ստանալու նպատակով երեկ ֆինանսների նախարարի հետ հանդիպում է եղել: Վերջինիս հանդիպել է նաեւ «Անտարես» հոլդինգի տնօրեն **Արմեն Մարտիրոսյանը**, որի խոսքով՝ նախարարը խոստացել է 15 օրվա ընթացքում պարզաբանումներ տալ:

Հայաստանում ուսումնական գրքերն ու մանկական գրականությունն ազատված են ավելացված արժեքի հարկից, հետեւաբար օրենքի փոփոխությունները վերաբերելու են գեղարվեստական ու վավերագրական գրքերին:

Երեկ «Հայելի» ակումբում երկու բանախոսները մտահոգություն հայտնեցին, որ գրքի թանկացումն ընթերցողին ավելի կմոտեցնի ինտերնետին ու կհեռացնի տպագիր գրքից: Թանկացումը վաս երեւույթ է, բայց ով գրքի կարիք ունի, նա դարձյալ կգնի այն, անգամ 20 տոկոս թանկացված գնով: «**Ազգի**» այս դիտարկմանը «Բյուրոկրաս» գրախանութի տնօրենը, սակայն, չհամաձայնեց: Նրա կարծիքով՝ թանկացումից հետո ընթերցողների թիվը կնվազի: Բանախոսները միակարծիք էին, որ գրքի սպառումը չպետք է հարկվի ավելացված արժեքի հարկով:

Գրքի թանկացումը կանխելու նպատակով «Facebook» սոցիալական կայքում նոր խումբ է բացվել՝ «Մենք դեմ ենք գրքերի թանկացմանը»: Երիտասարդ արձակագիր **Արամ Պաչյանը** խմբի ակտիվիստներից է, տրամադրված է հասատակամ ու պայքարելու է, որպեսզի գրքերն ընթերցողի համար դառնան ավելի մատչելի:

Ի. Պ.

Վարդան Օսկանյանը հրաժարվեց «Սիվիլիթասից»

ԲՀԿ-ին անդամագրված Վարդան Օսկանյանը հրաժարական է տվել «Սիվիլիթաս» հիմնադրամի նախագահի պաշտոնից եւ այդ առիթով բացատրություններ տարածել: Մասնավորապես նա պատմել է, թե ինչու է հիմնել հիմնադրամը, իրագործելով երկրում բարեփոխումներ իրականացնելու եւ քաղաքացիական հասարակությունն ամրապնդելու իր գաղափարները փորձելով իրականություն դարձնել. «Այս ամիս ես որոշեցի քաղաքացիական պատասխանատվության հարթությունից քայլ կատարել քաղաքական պատասխանատվության հարթություն: Այդ իսկ նպատակով ես հրաժարական եմ տվել «Սիվիլիթաս» հիմնադրամի խորհրդից: Հայաստանի օրենսդրությամբ նման դեպքում հրաժարականը պարտադիր չէ: Սակայն ես որոշեցի դա անել, որպեսզի իմ քաղաքական ներգրավվածությամբ չկաշկանդեմ հիմնադրամի գործունեությունը: Իմ քայլը պայմանավորված է նույն մոտեցմամբ, որ միշտ ունեցել եմ թե՛ որպես կառավարության անդամ, թե՛ երբ հեռանում էի կառավարությունից: Մեզանից յուրաքանչյուրը պատասխանատվության սեփական բաժինն ունի բոլորիս երազած երկիրը կառուցելու գործում: Զարգացած որեւէ ժողովրդավարական պետության մեջ դա բավարար պատճառ է քաղաքականություն մտնելու համար, եւ ժամանակն է, որ Հայաստանում եւս չխուսափենք նման ընկալումներից», նշել է Վ. Օսկանյանը:

Մ. Խ.

Խորհրդարանական ընդդիմությունը՝ ՀՀԿ-ի 41-մանդատանոց բոնուսի դեմ

1-ին էջից

Նշենք, որ այս արտահերթ քննարկման ժամանակ ներկա էր մեծամասնականով ընտրված մեկ պատգամավոր միայն՝ Լյովա Խաչատրյանը: Բանախոսին հարցերով հակադրվող հիմնականում ՀՀԿ-ական պատգամավորների գլխավոր կռվանն այն էր, թե սահմանադրության 64 հոդվածի՝ յուրաքանչյուր 18 տարեկան քաղաքացու ընտրելով եւ ընտրվելով կառավարմանը մասնակցելու իրավունքին է հակադրվում 100 տոկոս համամասնական կարգը, եւ բացի այդ՝ կայուն մեծամասնություն է պետք խորհրդարանում կայունության պահպանման համար երկրում: Ի պատասխան՝ հիմնական զեկուցողը հիշեց Երեւանի ավագանու՝ միայն համամասնական կարգով անցկացվող եւ սահմանադրությանը չհակասող ընտրությունները: Պետահրավական հանձնաժողովի նախագահ **Դավիթ Հարությունյանը նշեց, թե մի օր ընդդիմությունն էլ կլինի իշխանություն, եւ նրան էլ պետք կլինի կայուն իշխանություն (որը 41 մեծամասնականներն են ապահովում), ու որ խառը, ունիվերսալ կարգը պահելու ՀՀԿ որոշումը քաղաքական է, ա՛յդ է լավագույն մոդելը երկրի զարգացման համար:**

Հարակից զեկուցող, արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը իր բազմիցս նշած՝ արդյունավետության եւ ներկայացվածության հիմնավորումը բերեց 100 տոկոս համամասնականի մերժման առումով, վերջինս պառլամենտական մեծամասնություն ունենալուն, հետեւաբար եւ արդյունավետ կառավարմանը չի նպաստելու:

Վահան Հովհաննիսյանը խոսում էր հարցի էությունը չենթափոխելու մասին՝ իրականում մեծամասնականի 41 տեղով դուրս մղելով ընդդիմադիրներին, դուրս է գալիս, որ միշտ գործադիրն է իշխանություն ձեւավորում, այլ ոչ թե քաղաքական տարը:

Աժ փոխնախագահ **Էդուարդ Շարմազանովն իր արտահերթ ելույթում կոչ արեց ոչ թե ձեւի, այլ բովանդակության հետեւից ընկնել եւ ժողովրդավարական ընտրություններ կազմակերպել առկա կարգով:**

Աժ մյուս՝ ԲՀԿ-ական փոխնախագահ **Սամվել Բալասանյանը դեմ չէր խառը կարգին, 100 տոկոս համամասնականը վաղաժամ է ըստ նրա: Նրա կուսակից **Նաիրա Զոհրաբյանը** կրկին հիշեց, որ ԲՀԿ-ն 100 տոկոս համամասնականի կողմնակից է, եթե մանավանդ քաղաքական մոտիվացիայով խորհրդարան ենք ուզում ունենալ, սակայն քանի որ կան ԲՀԿ-ականներ, որոնք հարմար չեն համարում ընտրություններից ընդամենը 60 օր առաջ խաղի կանոն փոխելը, եւ ԲՀԿ-ում կարծիքները կիսվում են, ԲՀԿ առաջնորդ Գագիկ Ծառուկյանը ազատ է թողել ԲՀԿ-ական պատգամավորներին՝ իրենց խղճի համեմատ քվեարկելու:**

Սյոռպա Սաֆարյանը հիշեցրեց՝ մեծամասնական պատգամավորների 70 տոկոսին չեն ճանաչում իրենց ընտրողները՝ «օրինակ՝ լսե՞լ եք, որ նրանք հայտնեն ընտրողների տեսակետները արտակարգ իրավիճակի ռեժիմի նախագծի վերաբերյալ»:

Խմբակցությունների տեսակետները խտացրին առկա տեսակետները. ընդդիմությունը կոչ արեց մեծամասնությանը օրինագծին կողմ քվեարկելով բարի կամք ցույց տալ լավ ընտրություններ անցկացնելու, առանց նախնական 41-մանդատանոց բոնուսը գրպանը դնելու: Մեծամասնության ներկայացուցիչներն էլ պնդեցին, որ իրենց կարծիքը նույնն է: Այս գումարման պատմության վերջին էջերից մեկը երեկ փաստորեն փակվեց համամասնական կարգի վերաբերյալ քննարկմամբ, որն ամենայն հավանականությամբ այսօր չի ընդունվի:

Երեկ նաեւ կրքեր էր բորբոքել «Արտակարգ իրավիճակի իրավական ռեժիմի մասին» օրինագիծը, որի հայտնի դրույթը՝ հատուկ դեպքերում զինված ուժերին ոստիկանության կանոնակարգով սահմանադրական կարգը պահելու ժամանակ կիրառելու վերաբերյալ, ամենաբուռն հակադարձման է արժանանում: Մասնավորապես **Անահիտ Բախչյանը** այս օրենքի քննարկման ժամանակ նշեց, թե այս օրենքը ոչինչ էլ չի լավացնելու, եւ եթե իշխանությունները փորձեն կրկնել մարտի 1-ը՝ այս օրենքը չի օգնելու, որ այդ իրադարձությունները չկրկնվեն, ու շատ վաս նախանշան է այս օրենքի ընդունումը սպասվող ընտրական իրադարձությունների ֆոնին:

ԳՈՒՅԺ

Վախճանվել է «Միրոր սփեքթեյթրի» նախկին խմբագիր Արա Գալայճյանը

Ուոլթհեմից (Մասաչուսեթս, ԱՄՆ) ստացված հաղորդագրությունը գուժում է մահը Բոստոնում լույս տեսնող «Արմինյն միրոր սփեքթեյթր» անգլիատառ շաբաթաթերթի նախկին խմբագիր Արա Գալայճյանի, որ տեղի է ունեցել փետրվարի 26-ին:

Գալայճյանը ծնվել էր Երուսաղեմում 1938-ին Յեղասպանությունից մազապուրծ մարաշցիների՝ Գառնիկ եւ Մարի (Չինչինյան) Գալայճյանների ընտանիքում: Կրթությունը ստացել էր տեղի Սուրբ Թարգմանչաց վարժարանում: 1948 թվականի առաջին արաբ-իսրայելական պատերազմի ժամանակ ընտանիքը տեղափոխվել է Զահլե (Լիբանան), որտեղ երկու տարի հաճախել է Մխիթարյանների հայկական վարժարանը: Այնուհետեւ վերադառնալով Երուսաղեմ՝ շարունակել է ուսումը Թարգմանչաց վարժարանում եւ ավարտել 1951-ին: Նույն տարին մեկնելով Կիպրոս՝ ընդունվել է ՀԲԸՄ-ի Մելգոնյան կրթական հաստատությունը, որից հետո դասավանդել տեղի Մելիքյան վարժարանում:

1965-ին Երուսաղեմ վերադառնալով, ստանձնել է Եղիշե պատրիարք Տերտերյանի անձնական քարտուղարի, ինչպես նաեւ պատրիարքարանի պաշտոնաթերթ «Սիոնի» գլխավոր խմբագրի պաշտոնները: Միաժամանակ սկսել է դասավանդել հայ գրականություն Երուսաղեմի հոգեւոր ճեմարանում եւ Եբրայական համալսարանում: Վաղ տարիքից պրպտող եւ ուսումնասիրող անձնավորություն է եղել, հոդվածներ տպագրել հայկական տարբեր թերթերում:

1967-ին կազմել եւ հրատարակել է «Մշո վանքի ձեռագրերը» եզակի աշխատությունը, ինչպես նաեւ Պետրոս Դուրյանի երկու՝ «Տաղք» (բանաստեղծությունների) եւ «Նամականի» (նամակների) հատորները, եւ Արփիար Արփիարյանի ամբողջական գործերի առաջին հատորը:

Միացյալ Նահանգներ է տեղափոխվել իր կնոջ՝ Շուշանի հետ, եւ հաստատվել Բոստոնում, որտեղ ստանձնել է «Պայքար» շաբաթաթերթի եւ հետագայում՝ 1987-ից մինչեւ 1997-ը «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթի գլխավոր խմբագրի պաշտոնները: Կարճ ժամանակ հայերեն է դասավանդել նաեւ Մասաչուսեթսի համալսարանում: 2000 թվականին լույս է տեսել նրա «Օրը օրին» հոդվածների եւ խորհրդածությունների ժողովածուն:

Անդամ էր Ռամկավար Ազատական կուսակցության եւ «Վարդանանց ասպետների»:

Հայկական ատոմակայանի կառավարման պայմանագիրը կլուծարվի

Կառավարությունն իր առաջիկա նիստում հավանություն կտա 2003 թվականից մինչ այժմ «Հայկական ատոմային էլեկտրակայանի» 100 տոկոս բաժնետոմսերի հավատարմագրային կառավարումն իրականացնող «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ» ընկերության հետ հավատարմագրային կառավարման պայմանագրի վաղաժամկետ լուծմանը: Այդ որոշումը հիմնավորվում է նրանով, որ «ԻՆՏԵՐ ՌԱՕ ԵԷՍ»-ն ամբողջությամբ կատարել է պայմանագրերով իր առջեւ դրված խնդիրները, որի արդյունքում կարգավորվել է յուրաքանչյուր տարի վերալիցքավորման նպատակով վառելիքի ներկրման գործընթացը, ինչպես նաեւ, որ այդ ընկերությունը դիմել է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի եւ բնական պաշարների նախարարությանը՝ հավատարմագրային կառավարման պայմանագրի վաղաժամկետ լուծման համար:

Ա. Մ.

Մախային արտնություն եւս մեկ արտադրության համար

«ՎԿՍ Արմենիա» ընկերության համար կիրառված «Ժամանակավոր ներմուծում» մախային ռեժիմի ժամկետը կառավարության վաղվա նիստում կերկարաձգվի մինչեւ 2015-ի մարտի 3-ը: Ինչն անհրաժեշտ է համարվել ընկերության բնականոն գործունեությունն ապահովելու, արտադրության համար ժամանակակից սարքավորումները Հայաստանում պահելու համար, նոր աշխատատեղեր ստեղծելու, արտահանման ծավալներն ավելացնելու համար: Նշվում է, որ ընկերությունում ներկայումս աշխատում են 540 մարդ, որոնց ճնշող մեծամասնությունը կանայք են: 2011 թվականին Շիրակի մարզի Ամասիա քաղաքում «ՎԿՍ Արմենիան» հիմնել է թեթեւ արդյունաբերական նոր արտադրություն՝ շուրջ 100 աշխատատեղով:

Ա. Մ.

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակութեան ԻԱ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 0010, Հանրապետության 47
ֆաքս 374 10 562863
e-mail: azg@azg.am
azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ 529221
Հաշվապահութիւն (գովազդ) / հեռ 582960
Լրագրողների սենեակ / հեռ 581841
Համակարգչ. ծառայութիւն / հեռ 582483
Շուրջօրեայ լրահաւաք ծառայութիւն
/ հեռ 529353
Համակարգչային շարուածքը «Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տպագիր մամուլի միջոցով, ռադիոհեռուստատեսութեամբ կամ համացանցով, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան խստիւ արգելւում են համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում:
Գ տառով յօդուածները գովազդային են, որոնց բովանդակութեան համար խմբագրութիւնը պատասխանատուութիւն չի կրում:
"AZG" Daily NEWSPAPER
Editor-in-chief
H.AVEDIKIAN / phone: 374 10 521635
47 Hanrapetoutian st.,
Yerevan, Armenia, 0010

Ամփոփում

Պեսական եկամուտների կոմիտեի նախագահի առաջին տեղակալ **Արմեն Ալավերդյանի**՝ փետրվարի 24-ին Հարությունյանների՝ «Տար» ադրանքանիշի մակարդեղեն ներկրող «Ջի Էյջ Սթորիջ Էնթերփրայզս» ընկերության առնչությամբ արած հայտարարությունները «Նարեկացի» արվեստի միության նախագահ **Նարեկ Հարությունյանը** երեկ հրավիրած ասուլիսի դրդապատճառ ներկայացրեց, ընդգծելով, որ դեռեւս առանց դատարանի որոշման հարկերից խուսափելու մեջ իրեն որպես մեղավոր ներկայացնելը վիրավորական է Հարությունյանների ընտանիքի արժանապատվության համար:

Հիշեցնենք, որ Ալավերդյանը հայտարարել էր, թե Նարեկ Հարությունյանը կեղծ խանութի միջոցով միլիոնավոր դրամների հրացումներ է կատարել, բայց ցույց տվել ավելի փոքր ծավալների վաճառք, ըստ այդմ՝ պետությանը հասցվել է մոտ 70 մլն դրամի վնաս: Ավելին, ըստ ՊԵԿ-ի, 11 աշխատակից է պահվել առանց հրամանագրերի, աշխատավարձերը ցույց են տրվել ավելին, քան իրականում, ինչը բրեական պատասխանատվության առարկա է:

Ներկա դրությամբ Հարությունյանների ընտանիքին առնչվող մի քանի տարբեր գործեր են գտնվում դատարանում՝ ինչպես բրեական, այնպես էլ վարչական վարույթի եւ քաղաքացիական: Վարչական վարույթում գտնվող գործով Հարությունյանը բողոքարկել է հարկային պարտավորությունները չկատարելու մասին մինչ այդ կազմված հարկային ակտը, որն էլ նաեւ բրեական գործի հիմնական պատճառն է:

«Մենք չարամտորեն չենք խուսափել հարկերից, թող դատարանի վճիռ լինի, մենք պատրաստ ենք վճարել», երեկ հայտարարեց Նարեկ Հարությունյանը, ընդգծելով, որ խնդրո առարկա խախտումների հետ նշվող ժամանակահատվածում Հարությունյանների տարբեր գործունեություն ղեկավարել են ուրիշները, իսկ ինքը «ստիպված տնօրեն» է դարձել 2010-ի սեպտեմբերից: Մինչ այդ որպես լիազորված անձ գործարքներ կնքել ու ամեն ինչ տնօրինել է Հարությունյանների վստահված անձ Սեւակ Արծրունին, որ ինչ-որ ժամանակահատվածում Հարությունյանների բիզնեսի գործունեության շահույթից բաժին է ուզում:

Այս ամենով հանդերձ, շարունակում են արգելանքի տակ մնալ Հարությունյանների ունեցվածքն ու հաշիվները, այսինքն, ըստ Նարեկ Հարությունյանի, իր ընտանիքի վրա ճնշումները բոլոր կողմերից են՝ հարկայինից, մաքսայինից, դատախազությունից, քննիչներից: Ուստի նա կոչ է անում բոլոր սփյուռքահայերին, նաեւ լրատվամիջոցներին՝ հետեւողական լինելու եւ հետեւելու իր ընտանիքի դեմ գործին:

Ասուլիսին ներկա Հարությունյանների փաստաբաններ **Լեռնիկ Հովհաննիսյանը, Անի Թորոսյանը, Գեւորգ Չամիշյանն** ու **Հայկ Ալումյանը** այժմ էլ ընթացքի մեջ գտնվող գործերից տարբեր խախտումների օրինակներ բերեցին, թե ինչպես Հայաստանում իսկ չգտնված ժամանակահատվածի համար մեղադրանքներ են ներկայացվել Նարեկ Հարությունյանին, երբ յուրացումների ժամանակ համապատասխան կառույցում տնօրեն է եղել հիմա էլ ազատության մեջ գտնվող Արսյոմ Մարտիրոսյանը, իսկ փաստացի ամբողջը ղեկավարել է Սեւակ Արծրունին, թե ինչպես են խախտվել դատավարական տարբեր ժամկետներ, ինչպես է բրեական գործով դատախազ **Բագրատ Պետրոսյանը** դատարանում ներկայացրել տեղեկություններ, որոնք չեն հաստատվել ու դրանով գործը ձգձգվել է, թե ինչպես դատական նիստ որ է նշանակվել ապրիլի 24-ը, կամ հարկային ակտի վերաբերյալ բողոքի առնչությամբ դեռ տարբերակ չկայացրած՝ սպասում են բրեական գործի ավարտին եւ այլն:

Տպավորությունն ընդհանրապես այնպիսին էր, թե Հարությունյաններին իսկապես հետապնդում են, կամ ինչ-որ բան այն չէ նրանց նկատմամբ Հայաստանի ու հայաստանցիների վերաբերմունքում: «**Ազգը**» փորձեց հետաքրքրվել, թե, ի վերջո, ո՞րն է նման հետապնդման պատճառը, ո՞ւմ եւ ինչո՞ւ հարմար չեն եկել Հարությունյանները, կամ ի՞նչ նպատակներ ունի նրանցից գումար պահանջող Սեւակ Արծրունին:

Հարցին արձագանքեց «Հետաքննող լրագրողներ» ՀԿ նախագահ **Էդիկ Բաղդասարյանը**՝ ներկայանալով որպես խնդրին քաջատեղյակ: Նա նշեց, թե Սեւակ Արծրունին թերեւս զոհ է, որ, այդուհանդերձ, ներգրավված է նաեւ շինարարության ոլորտում, որտեղ եւս խնդիրներ ունի: Ըստ Բաղդասարյանի, այս գործի առանցքը «ժամացույցների գործարանն է, որի 2-րդ բաժնետերը Հարությունյաններն են՝ մոտ 8-10 մլն դոլար բաժնեմասով»:

Նշենք, որ տվյալ դեպքում խոսքը «Երեւանի ժամացույցի գործարան» ԲԲ ընկերության մասին է, որի գլխավոր տնօրեն **Նորայր Զրաղյանը** ժամանակին արդեն հերքել է, թե Նարեկ Հարությունյանը բաժնետեր է այդ գործարանում, ինչն իրականություն է մասամբ, քանի որ բաժնետեր է հորից այդ բաժինը ժառանգած Սարո Հարությունյանը՝ Նարեկի եղբայրը:

Նարեկ Հարությունյանն ինքը «**Ազգի**» հարցը կրկնելուն արձագանքեց. «Հանուն արդարության պետք է պայքարել... Ես ցավում եմ, որ այս ճնշումների պատճառով չեմ կարողանում մշակութային հարցերով զբաղվել»: Իսկ թե մի քանի դատական գործերն իրականում ինչ նպատակ ունեն, եթե դրանք «հետապնդում» ոլորտից են, Հարությունյանը թողեց անպատասխան:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Մի եղբորը պատկանող մոտ 10 միլիոնը կապ չունի՞ մյուս եղբոր հետ

«Արմեն Ալավերդյանի խոսքերը վիրավորական են Հարությունյանների ընտանիքի արժանապատվության համար»

Մայրաքաղաքում աղբահանության վարձավճարը բանկերի մի մասը գանձում է առանց միջնորդավճարի

Ի պատասխան «Ազգ»-ի նախորդ համարում աղբահանության վճարների վերաբերյալ հոդվածի, Երեւանի քաղաքապետարանից ստացել ենք հետեւյալ անուղղակի արձագանքը:

2012 թվականի հունվարի 1-ից աղբահանության վճարը կիրառվում է որպես համայնքային բյուջե գանձվող տեղական վճար: Երեւան քաղաքում աղբահանության վճարը բնակչության մասով սահմանվել է փաստացի բնակվող յուրաքանչյուր բնակչի համար ամսական 200 ՀՀ դրամ: Օրենքով սահմանվել են նաեւ աղբահանության վճարը չվճարելու կամ ուշացնելու դեպքում տույժերի հաշվարկման եւ գանձման մեխանիզմները: Մասնավորապես, յուրաքանչյուր ամսվա համար աղբահանության համար վճարը պետք է վճարվի մինչեւ հաջորդող ամսվա 15-ը ներառյալ, իսկ չվճարելու կամ վճարումն ուշացնելու դեպքում վճարման ժամկետին հաջորդող ամսվա 1-ից ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար հաշվարկվում եւ գանձվում է տույժ՝ չվճարված գումարի 0,15 տոկոսի չափով: Օրինակ՝ 2012 թվականի հունվար ամսվա համար աղբահանության վճարի վճարման վերջնաժամկետը փետրվարի 15-ն է, իսկ չվճարելու դեպքում՝ մարտի 1-ից հաշվարկվելու են տույժեր՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար:

Տույժերից խուսափելու համար Երեւանի քաղաքապետարանը կանխավ ծանուցում է, որ համատիրության աշխատակցի չայցելելու դեպքում բնակիչը կարող է աղբահանության վարձը վճարել վարչական շրջանի վարչական շենքում: Բացի դրանից, բանկերի եւ վճարահաշվարկային կազմակերպությունների հետ վարվող բանակցությունների արդյունքում Երեւանի քաղաքապետարանը ձեռք է բերել պայմանավորվածություններ Հայ բիզնես բանկի, Հայկական զարգացման բանկի եւ «Ի-դրամ» վճարահաշվարկային կազմակերպության հետ՝ աղբահանության վճարը ֆիզիկական անձանցից առանց սպասարկման վարձի կամ միջնորդավճարի գանձելու մասին: Շարունակվում են բանակցությունները «Հայփոստ» ՓԲԸ-ի եւ վճարահաշվարկային այլ կազմակերպությունների հետ:

Երեւանի քաղաքապետարանի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի վարչություն

ՀԱՇՎԵՏՈՒ

Լրագրողներն ընդդեմ բռնության



«Լրագրողների եւ լրատվամիջոցների նկատմամբ բռնությունները, ճնշումները եւ դատական գործերը Հայաստանում 2010-2011 թթ.» գրքի շնորհանդեսը տեղի ունեցավ փետրվարի 20-ին: Այս հրատարակությունը շարունակում է 2008 թ. «Հետաքննող լրագրողների» ՀԿ-ի սկսած մամուլի եւ խոսքի ազատությունը ներկայացնող գրքերի շարքը:

«Սա երկրորդ հրատարակությունն է: Առաջինը 2008-2009 թթ. էր: Առաջին հերթին մենք կարեւոր ենք համարում նման տվյալների բազայի ստեղծումը՝ հետազոտողների, լրագրողների, իրավաբանների եւ այլ շահագրգիռ անձանց համար: Նրանք, ովքեր կուզենան անդրադառնալ այս թեմաներին, կարող են վերցնել այս գիրքը եւ տեսնել, թե ինչ նախապատմություն ուներ պրոցեսը, ինչ դինամիկա է ձեւավորվել, որոնք են հիմնական մարտահրավերները եւ խոչընդոտները լրատվամիջոցների զարգացման համար Հայաստանում», ասաց նույն ՀԿ-ի անդամ, գրքի խմբագիր Լիանա Սայադյանը:

Երկամյա մոնիտորինգը ցույց է տվել, որ Հայաստանում լրագրողների նկատմամբ բռնությունների թիվը նվազում է ոչ ընտրական տարում եւ աճում նախընտրական շրջանում: 2010-2011 թթ. դրանց թիվն իսկապես նվազել է՝ համապատասխանաբար 9 եւ 4 դեպքի՝ նախորդ՝ 2008-2009-ի՝ 18 եւ 11 դեպքի համեմատությամբ:

«Այս հրատարակությունը մեզ բոլորիս կօգնի շատ ավելի իրազեկ լինել եւ ավելի ճիշտ պաշտպանություն կառուցել, որպեսզի մեր անբաւիր հեղինակություն ունեցող հասարակական ու քաղաքական գործիչները չշարունակեն պատիվ պահանջել լրագրողներից: Այս գիրքը, ի լրումն շատ կարեւոր ուսումնասիրություն լինելուն, նաեւ համերաշխության ժեստ է լրագրողական հանրության համար», ասաց «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ Լուսինե Հակոբյանը, որի ՀՀ եռաստիճան դատական համակարգում ստեղծված գործերով կայացված վճիռների վերաբերյալ վերլուծությունները նույնպես տեղ են գտել գրքում:

Բացի դրանից, ներկայացվեց Հայաստանում խոսքի ազատության հետ կապված օրենսդրական դաշտի վերլուծություն: «ՀՀ-ն այն քիչ պետություններից է, որտեղ զրպարտությունը եւ վիրավորանքը ապաքրեականացվել են: Այս օրենքով կրճատվում է լրագրողների նկատմամբ բռնությունների քանակը եւ բարձրանում են լրագրողական էթիկայի ստանդարտները», նշեց «Իրավունքի Եվրոպա միավորում» ՀԿ նախագահ Լուսինե Հակոբյանը:

Գիրքը, որը լույս է տեսել հայերեն եւ անգլերեն հատվածներով, բաղկացած է երկու բաժնից՝ «Լրագրողները եւ ԶԼՄ-ները դատարանում», եւ երկրորդ բաժնում ամփոփված են լրագրողների դեմ բռնությունների դեպքերը եւ դրանց բացահայտման հետ կապված զարգացումները:

ՆԱՐԻԱ ՎԵՐԴՅԱՆ

Հայկ Դեմոյանի բացատրությունը համոզիչ չէր

Ատենախոսության մեջ առկա բազմաթիվ սխալները, թերությունները ու իրարամերժ կարծիքները, անգամ ռուսերեն լեզվի անհասկանալի գերակայությունը չխանգարեցին Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն Հայկ Դեմոյանին ստանալու պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան:

Երեկ Գիտությունների ազգային ակադեմիայի պատմության ինստիտուտում տեղի ունեցավ Հայկ Դեմոյանի դոկտորական ատենախոսության պաշտպանությունը:

Սակայն մինչ լեզվի վերոնշյալ խնդրին անդրադառնալը հակիրճ ներկայացնենք պաշտպանության ընթացքում նշված մի քանի թերություններն ու կարծիքները: Ընդդիմախոսներից մեկը՝ ակադեմիայի արեւելագիտության ինստիտուտի տնօրեն Ռուբեն Սաֆրաստյանն ընդգծեց, որ ատենախոսությունը գրված է հաղթեղ՝ բազմաթիվ քերականական սխալներով ու, չգիտես ինչո՞ւ, ռուսերեն:

Նույնիսկ կարծիք հնչեց, որ ատենախոսությունը հասել է ոչ թե պատմագիտական մակարդակի, այլ մնացել ընդամենը ներքաղաքագիտական մակարդակի վրա, անգամ եզրակացություններն են քաղաքագիտական, ոչ թե պատմագիտական:

Իսկ ռուսերեն գրված լինելու մասով Ազգային արխիվի տնօրեն Ամատունի Վիրաբյանը նույնպես նշեց՝ իր համար անհասկանալի է, թե ինչո՞ւ է ատենախոսությունը ռուսերեն, ապա դիմելով Հայկ Դեմոյանին՝ ավելացրեց. «Պետք է ներկայացրած լինեիք հայերեն»:

Հայկ Դեմոյանը, իհարկե, բոլոր դիտարկումներին տվեց իր պատասխանները, չնայած հայերեն չգրելու վերաբերյալ բացատրությունը համոզիչ չէր. «Ես սացել եմ հայերեն կրթություն: Բայց եթե ես այս աշխատանքը գրեի հայերեն լեզվով, մենք այստեղ նստած կլինեինք երեւի 5-6 տարի առաջ. դա հետաքրքրական էր: Որպես գիտնական ես խնդիր եմ դրել գնալ ավելի բարդ ճանապարհով: Եթե ես աշխատանքը չգրեի ռուսերեն, չէի սանա ԱՊՀ երիտասարդ գիտնականների մրցանակ: Բայց որպես հեղինակ գտնում եմ՝ աշխատանքը պետք է ներկայացվի նաեւ մայրենի լեզվով»:

Հայկ Դեմոյանը, սակայն, չբացատրեց համոզիչ կերպով, թե ո՞րն էր հայերեն թարգմանելու դժվարությունը եւ ինչո՞վ է պայմանավորված ատենախոսությունը ռուսերեն ներկայացնելու հաղթությունը:

Ի. Պ.

Հ. Գ. - Հիշեցնենք, որ երկուշաբթի օրը պատմաբան Գեւորգ Յազըճյանն ասուլիսի ժամանակ ասել էր՝ կիրաժարվի իր գիտական աստիճանից, եթե մասնագիտական խորհուրդը Հայկ Դեմոյանից չպահանջի ատենախոսությունը հայերեն: Իր պայմանի համաձայն՝ Գեւորգ Յազըճյանը երեկ հրաժարվել է գիտական աստիճանից:

Զուգակցիր.

Ինչպես նշել էինք «Ազգ»-ի փետրվարի 21-ի համարում, կանդրադառնանք Շոտլանդիայի հավանական անկախության հռչակմանը, այս համարում՝ դրա իրավական հիմքերին, շոտլանդացի ժողովրդի ինքնորոշման իրավունքի արտահայտման իրավասությանն ու այս ամենի վերաբերյալ Լոնդոնի դիրքորոշմանը:

Շոտլանդական ինքնավարության հարցն առկա է դեռևս 1707-ից: Հենց այդ թվականին Անգլիայի ու Շոտլանդիայի միջև համաձայնագիր ստորագրվեց, ըստ որի Շոտլանդիան անցավ Անգլիայի «խնամակալության տակ»: Այսինքն, Անգլիան վերոհիշյալ պայմանագիրը ստորագրելով շոտլանդական պետության հետ, դիտել է վերջինիս որպես իրավասավար սուբյեկտի, բացի սրանից՝ Շոտլանդիան ինքն է ստորագրել «խնամակալության տակ» անցնելու սեփական պատրաստակամության մասին իրավական փաստաթուղթը: Հիշեցնենք, որ միակ փաստաթուղթը, ըստ որի Լեռնային Ղարաբաղն անցնում է Սովետական Ադրբեջանի «խնամակալության տակ», 1921-ի հուլիսի 5-ին ՌԿ(բ)Կ կենտկոմի բյուրոյի պլենումի նիստի որոշումն է, որն ընդունվել է առանց քվեարկության: Հետևաբար, ի տարբերություն Շոտլանդիայի, որը «սեփական ցանկությամբ» է առնվել խնամակալության, Ղարաբաղին ոչ ոք չի էլ հարցրել իր ցանկության մասին, ինչը վերջինիս պայքարը շատ ավելի արդարացի է դարձնում:

Դառնալով Շոտլանդիային ու հատկապես մեր օրերին՝ նշենք, որ Շոտլանդիայի անկախության մասին խոսակցություններն ավելի շատացան, երբ այդ երկրի խորհրդարանական ընտրություններում հաղթեց Շոտլանդիայի ազգայնական կուսակցությունը՝ ներկայիս առաջին նախարար Ալեխ Սալմոնդի գլխավորությամբ: Իր առաջին իսկ հայտարարություններում Սալմոնդը նշեց. «Մենք պատրաստվում ենք մի պետություն ստեղծել, որն ազատ կլինի որոշումների կայացման հարցում, որը կկարողանա որպես հավասարը հավասարին հարաբերվել այլ պետությունների հետ: Մի խոսքով՝ մենք կլինենք նույնքան նորմալ մի պետություն, ինչպիսին են այսօր աշխարհում գոյություն ունեցող մոտ 200 անկախ երկրները»: Այնուհետև Սալմոնդն ու շոտլանդացի ազգայնականները հայտարարեցին, որ «նորմալ պետություն» ստեղծելու համար իրենք պատրաստվում են հանրաքվե անցկացնել, ընդ որում, քանի որ Մեծ Բրիտանիան սահմանադրություն չունի, այլ առաջնորդվում է ավանդույթներով, ապա ստացվել է այնպես, որ շոտլանդական (ոչ բրիտանական) պառլամենտը ունի իրավասություն՝ իր տարածքում անցկացնելու համաժողովրդավարական հանրաքվե: Ի տարբերություն Բրիտանիայի՝ ԽՍՀՄ-ն ուներ սահմանադրություն, որի բարեփոխված տարբերակով երկրի տարածքում գոյություն ունեցող ինքնավար մարզերն ու հանրապետությունները, ինչպիսին էր նաեւ ԼՂԻՄ-ը, ստանում էին իրավասություն որոշելու՝ անցնել միութենական մի հանրապետության կազմից մյուսի կազմ: Ինչը եւ, համաձայն օրենքի, արել է ԼՂԻՄ մարզխորհուրդը 1988-ի հուլիսի 12-ին:

Լոնդոնի երկու պահանջը

Անշուշտ, նախորդ պատրաստ լինելով Շոտլանդիայում ազգայնականների հաղթանակին ու ծանոթ լինելով վերջիններիս ծրագրերին՝ Լոնդոնը անմիջապես արձագանքեց Սալմոնդի հիշյալ հայտարարությանը: Նախ, Լոնդոնից հայտարարեցին, թե «հանրաքվեի անցկացումն անօրինական է, եւ շոտլանդական խորհրդարանը չի կարող միայնակ իրագործել այն»: Այնուհետեւ սակայն, երբ Ալեխ Սալմոնդը պատասխանեց. «Խորհուրդ եմ տալիս Դեւիդ Քեմերոնին՝ չդիմել անհարգալից միջոցների: Մենք կողմ ենք երկխոսության եւ ցանկանում ենք դրանք՝ հաշվի առնելով, որ Շոտլանդիայի խորհրդարանն ունի Շոտլանդիայում արդար հանրաքվե նախապատրաստելու եւ անցկացնելու բոլոր իրավունքները, որպեսզի Շոտլանդիայի ժողովուրդը որոշի իր ապագան: Այս հարցը Շոտլանդիայի ազգային իշխանությունների իրավասությունն է», Մեծ Բրիտանիայի կառավարությունը հենց նույն օրը որոշում կայացրեց՝ «շոտլանդացիների կողմից անկախության հանրաքվե անցկացնելու ճանապարհին եղած իրավական խոչընդոտները վերացնելու մասին»: Ավելին, վարչապետ Քեմերոնը հայտարարեց, որ «Լոնդոնն ամենուին էլ դեմ չէ Շոտլանդիայի հանրաքվեին, դա նրանց իրավունքն է, պարզապես նպատակահարմար կլիներ, որ այդ հանրաքվեն անցկացվեր հնարավորինս շուտ, քանի որ հարցի անորոշությունը դանդաղեցնում է Շոտլանդիայի տնտեսության զարգացումը»: Իհարկե, հասկանալի է, թե ինչու է թագավորության «գլխավոր կառավարիչը» հիշեցնում հատկապես տնտեսության մասին. Շոտլանդիայի ֆինանսական ողջ ոլորտը համակարգվում է Լոնդոն-կենտրոնի կողմից: **«Ազգը»** հաջորդ համարներից մեկում կանդրադառնա հենց այս՝ բրիտանա-շոտլանդական տնտեսական հարաբերություններին՝ վերջինիս անկախության հնարավոր հռչակման համապատկերում: Այդուհանդերձ խիստ ուշագրավ է Քեմերոնի «կանաչ լույսը»՝ Շոտլանդիայի հանրաքվեին: Ճիշտ է, Լոնդոնն առաջ է քաշել նաեւ երկու պահանջ. նախ՝ հանրաքվեի քվեարկության թերթիկներում լինում է միայն մեկ հարց. «Համաձա՞յն եք դուրս գալ Միացյալ Թագավորության կազմից»՝ «այո» կամ «ոչ» տարբերակներով: Մինչդեռ շոտլանդացիները նախապատրաստում են նաեւ երկրորդ հարցը. «Իսկ համաձա՞յն եք Շոտլանդիայի ինքնավարության ընդարձակմանը Միացյալ Թագավորության կազմում»: Ինչպես նկատում են բրիտանացի որոշ փորձագետներ՝ Շոտլանդիայի ինքնավարության մակարդակի բարձրացմանը Լոնդոնն այսօր պատրաստ չէ: Երկրորդ «անգլիական» պահանջը վերաբերում է հանրաքվեի ժամկետներին: Սալմոնդն առաջարկում է, որ այն լինի 2014-ի աշնանը, Քեմերոնը, սակայն պահանջում է, որ Լոնդոնը կընդունի շոտլանդական հանրաքվեի արդյունքները, միայն եթե դա անցկացվի Լոնդոնի սահմանած ժամկետներում: Նշվում է անգամ, որ Լոնդոնը կարող է 18-ամսյա ժամկետ սահմանել, որպեսզի Շոտլանդիան հենց այս ժամանակահատվածում իրականացնի հանրաքվեն: Բանն այն է, որ այսօր շոտլանդացիների զգալի մասը համաձայն չէ Բրիտանիայի կազմից դուրս գալուն՝ առաջին հերթին հաշվի առնելով Միացյալ Թագավորության տնտեսական հնարավորություններն ու հանգամանքը, որ առանց այդ էլ Շոտլանդիան Բրիտանիայի համեմատաբար «ամենագործազուրկ» երկրամասն է: Սոցիալական վերջին հարցումների համաձայն՝ շոտլանդացիների միայն 1/3 մասն է կողմ անկախությանը: Հետեւաբար Լոնդոնը վստահություն ունի, որ հանրաքվեն հնարավորինս շուտ անցկացնելու պարագայում նախ անկախությունը կմերժվի, հետո՝ Միացյալ Թագավորության միացյալ տնտեսությունը Շոտլանդիայի անորոշության պատճառով շատ չի տուժի: Նույն պատճառով էլ Շոտլանդիայի առաջին նախարար Սալմոնդն է ցանկանում հնարավորինս երկարաձգել հանրաքվեի ժամկետները: Վերջինս հույս ունի, որ մինչ այդ ժամկետը ազգայնականները կկարողանան ավելի մեծ թվով համակիրներ ձեռք բերել: Չնայած այսօր Շոտլանդիայի ազգայնական կուսակցությունը միակն է, որը բացահայտորեն անկախության է ձգտում, մյուս երեք կուսակցությունները ընդհանուր առմամբ Բրիտանիայի պահպանման են ձգտում:

Իսկ թե ինչո՞ւ է ընտրվել հենց 2014-ի աշունը՝ շատ խորհրդանշական պատճառով: Հենց այդ տարի կլրանա Բենոքբրնի ճակատամարտի 700-րդ տարեդարձը, որտեղ շոտլանդացիները հաղթել են անգլիացիներին...:

Ի՞նչ է ուրեմն ստացվում. «մայր պետության» մաս կազմող ինքնավարությունը իրավասու է իրականացնել սեփական ինքնորոշման իրավունքը: Ընդ որում, այն ամենուին էլ հակասության մեջ չդնելով «մայր պետության» տարածքային ամբողջականության հետ. կոնկրետ Լոնդոնից ոչ ոք շոտլանդացիներին չի մեղադրում Բրիտանիայի տարածքային ամբողջականությունը խախտելու համար, քանի որ սա, ինչպես գիտենք, այդ դեպքը չէ: Հետեւաբար վիճարկման ենթակա չէ նաեւ Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի իրացումը, որին, ի տարբերություն շոտլանդացիների, նախկին՝ անցանկալի իրավիճակը պարտադրել են: Միակ հարցը մնում է Բաքվից Լոնդոն հեռավորությունը, անշուշտ՝ քաղաքակրթության ու միջազգային իրավունքի իմացության տեսանկյունից վերցրած: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայի քաղաքական բառարանում կա այսպիսի տերմին՝ «Այդպես է կամենում թագուհին» (La Reyne ainsi veult): Սա այն դեպքերում է գործածելի, երբ թագուհին հավանության է արժանացնում որեւէ օրինագիծ: Որեւէ կասկած չկա, որ եթե Շոտլանդիայում անկախության հանրաքվե անցկացվի ու անկախության կողմնակիցներն ավելի շատ լինեն, բրիտանական թագուհին Միացյալ Թագավորության անունից միջպետական կարգ կնախաձեռնի նորանկախ պետության հետ, մակագրությամբ՝ «Այդպես է կամենում թագուհին»: Մինչդեռ թագուհին ամենուին էլ թագավոր չէ... այն էլ՝ ադրբեջանական:

ՀՈՎԻԿ ԱՓՅԱՆ

«Այդպես է կամենում թագուհին»

«Ինչպես ակադեմիկոս Սախարովը կատարեց Ելենա Բոնների պահանջը»

Տատյանա Չալաձե անունով «լրագրող»-ին մենք անդրադառնալու առիթներ ունեցել ենք: Նա նույնիսկ «հարկ էր համարել հակադարձել» մեր «բաց նամակ»-ին եւ խորհուրդ էր տվել մեր մասին իրեն «այլեւս չհիշեցնել»: Նրան խոցել էր մեր ընդգծումը, որ վարձահավիրված է եւ նյութական ու այլ բարիքների դիմաց ծառայում է Իլհամ Ալիեւի վարչակարգին:

Հարգելով խանումի «մեր մասին այլեւս չլսելու» ցանկությունը, մենք տեւական ժամանակ նրա լրագրողական «հայտնագործություններին» չենք անդրադառնում: Խոստանում ենք առաջիկայում եւս ձեռնպահ մնալ, եթե, իհարկե, Տատյանա խանումը մի նոր հիմարություն չանի: Այլ բառ չենք գտնում՝ բնութագրելու նրա «Ելենա Բոնների անվան մարդասիրական միջանցք» վերտառությամբ հոդվածը (տես՝ http://www.1news.az/analytics/20120226094524520.html#page999): Այստեղ «Բակռաբոչի»-ի գլխավոր խմբագրի տեղակալ եւ Ադրբեջանի վաստակավոր լրագրող Տատյանա Չալաձեն «գերազանցել է» նույնիսկ իրեն:

Խոսելով Խոջալուի մարդասիրական միջանցքի մասին, նա գրում է, թե «բանից պարզվում է, սխալ էր, երբ կարծում էինք, թե դա Հայկ Դեմոյանի՝ «հայկական հատուկ ծառայությունների աշխատակցի» (չկերտները մերն են- Վ. Ա.) հնարածն է» եւ պնդում, որ «առաջին անգամ այդ կեղծիքը «Մեմորիալ»-ի հաշվետվության մեջ է մտցրել ակադեմիկոս Սախարովը՝ Ելենա Բոնների պնդմամբ»:

Որպես «հավաստի փաստ», Տատյանա խանումը մի ամբողջ պատմություն է բերում. «Նադեժդա Լվովնա Պետրոսովայի հուշերից, որ նա ասել է մի ռուսասանցի լրագրողուհու՝ մասնավոր զրույցի ժամանակ, ով դա հասկանալի պատճառներով չի հրապարակել Բոնների մասին հարցազրույցում, բայց ձայնագրությունները պահպանել է, հասկանալի է դառնում, թե որտեղից են «բուսել հայկական մարդասիրական միջանցքի ոտքերը»:

Նադեժդա Պետրոսովան պարբերաբար լինում էր Չկալովի փողոցի այն բնակարանում, որտեղ ապրում էին Սախարովը եւ Բոնները, որպեսզի մատչություն անի: Մի անգամ (նա այդ դեպքը մատնահել է, քանի որ տասը օր անց մահացել է հայրը) ինչպես միշտ, խոհանոցի աղակիներն էր լվանում: Սախարովը եւ Բոնները տանն էին եւ ուրիշ սենյակում բարձրաձայն խոսում էին: Հետո Սախարովը գալիս է խոհանոց եւ սիրտը բռնած նստում աթոռին: Անսպասելի խոհանոց է խուժում Բոնները, կտրուկ դեպի իրեն շրջում աթոռը՝ դրա վրա նստած Սախարովի հետ մեկտեղ եւ, ձեռքերով բռնելով ակադեմիկոսի ուսերից, կռանալով եւ նայելով նրա աչքերի մեջ, բարձրաձայն եւ հոդաբաշխ ասում է, որ «դու կստիպես, որ նրանք այդ հաշվետվություն մտցնեն միջանցքը, ես Սիլվային (Սիլվա Կապուտիկյանին- Վ. Ա.) խոստացել եմ»: Ապա բողոքական լռությունից հետո հեռանալով Սախարովից եւ արհամարհանքով նայելով նրան, դիմում է հավաքարուհուն. «Նադյա, վերցրու փալասը, աթոռի տակը մաքրիր»: Զարմացած Պետրոսովան, փալասը ձեռքին, տարակուսում է. «Ինչ բան է, միջանցք բաժանել չեն կարողանում»: Խեղճ կինը, նրա հետ էլ՝ երիտասարդ լրագրողուհին չէին էլ պատկերացնի, թե ինչ միջանցքի մասին է խոսք եղել ակադեմիկոս Սախարովի անձնական կյանքից այդ դրամատիկ միջադեպի ժամանակ»:

Մենք այսպան երկար մեջբերեցինք Տատյանա խանումի հոդվածից, որպեսզի ընթերցողը որեւէ կասկած չունենա. նա պնդում է, որ «Մեմորիալ»-ի հաշվետվության մեջ Խոջալուի խաղաղ բնակիչների համար թողնված մարդասիրական միջանցքի հիշատակումը տեղի է ունեցել ակադեմիկոս Դմիտրի Սախարովի միջամտությամբ, քանի որ այդպես էր ցանկացել Ելենա Բոնները, որը «խոստացել էր Սիլվային»: Իմաստն այն է, որ Սիլվա Կապուտիկյանը,- ում, ի դեպ, Ադրբեջանը նույնպես մեղադրում է Խոջալուի «ցեղասպանության կազմակերպման» մեջ,- որպեսզի «մաքրած լինի հանցագործության հետքերը, Ելենա Բոներին խնդրել է, որպեսզի վերջինս սիրտի ամուսնուն՝ ակադեմիկոս Անդրեյ Սախարովին, որ «Մեմորիալ»-ի հաշվետվության մեջ անպայման ընդգծվի մարդասիրական միջանցքի առկայությունը»:

Ամեն ինչ ճշմարտանման կթվար, եթե... Բանն այն է, որ ակադեմիկոս Սախարովը կյանքից հեռացել էր 1989 թ. դեկտեմբերի 14-ին: Իսկ Խոջալուի դեպքերը տեղի են ունեցել 1992թ. փետրվարի 25-26-ին: Բնականաբար, հանգուցյալ Սախարովը չէր կարող որեւէ ազդեցություն ունենալ «Մեմորիալ»-ի հաշվետվությունը կազմող իրավապաշտպանների վրա: Ահա սա է ադրբեջանական քարոզչության «ծանր հրետանու» ոչ միայն իմացական, այլեւ բարոյական մակարդակը: Այն է՝ չշիրպտեսելով փաստի, կրկնել իշխանություններին, նույնիսկ «մի քայլ առաջ անցնել», կաբվից դուրս գալ՝ ունենալու համար «բարեհույս»-ի համարում: Քանի որ դա է Բաքվում աշխատանք, պարուսն եւ «հանդուրժողական» վերաբերմունք գտնելու միակ հնարավորությունը:

Բայց Տատյանա խանումի ճակատագիրը չէ, որ մեզ հուզում է: Կիրքը, որով ադրբեջանական կողմը փորձում է «հերքել» մարդասիրական միջանցքի գոյության փաստը, ինչի վկայություններից մեկն էլ Չալաձեի հոդվածն է, ավելի է խորացնում համոզմունքը, որ Խոջալուի խաղաղ բնակիչներն իրոք դաժանորեն սպանվել են իրենց իսկ ազգակիցների ձեռքով: Եվ ոչ միայն:

ՎԱՀՐԱՄ ԱԹԱՆԵՍՅԱՆ

«Կարո՞ղ եք պատկերացնել, հրեաներին հավիրել բանավեճի՝ ճնարկելու Հոլոքոստի եղելության փաստը»

ՀՀ ԱԳ նախարարի հարցազրույցը ավստրիական Der Standard-ին

«Նման որոշումներ ընդունելու են նաեւ այլ երկրներ, քանի դեռ Թուրքիայի պետական քաղաքականությունն է Հայոց ցեղասպանության ժխտումը», ավստրիական Der Standard օրաթերթին տված հարցազրույցում հայտարարել է Հայաստանի արտգործնախարար **Էդվարդ Նալբանդյանը**՝ ի պատասխան հարցին, թե արդյոք Հայաստանը Ֆրանսիայի խորհրդարանի՝ ցեղասպանությունների հերքումը քրեականացնող օրենքը համարում է մի մոդել, որին պետք է հետեւեն նաեւ այլ երկրներ, ինչպես օրինակ՝ Ավստրիան:

Ֆրանսիական օրենքի ընդունումը Ֆրանսիայում նախագահական ընտրություններին կապելու առնչությամբ էլ, ըստ ԱԳՆ հաղորդագրության, Նալբանդյանը նշել է, թե այդպես չէ: «Օրենքը լիակատար աջակցություն է վայելում Ֆրանսիայի նախագահի, կառավարության, Ֆրանսիայի հիմնական քաղաքական ուժերի կողմից՝ լինեն աջ կամ ձախ, քվեարկվել եւ ընդունվել է Ազգային Ժողովում եւ Սենատում: Այդպիսով օրենքի ընդունումն արտացոլում է Ֆրանսիայի ողջ ժողովրդի կարծիքը»:

Հայ-թուրքական հարաբերությունների նորմալացման խոսակցությունների ֆոնին Թուրքիայի սպառնալիքների ազդեցությամբ Սահմանադրական խորհուրդ ներկայացված օրենքի՝ Հայաստանի համար հակակարդությունավետ լինելու մասով էլ արտգործնախարարը պնդել է, որ այդ օրենքը կարող է միայն օգտակար լինել հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման համար: «Եթե ինչ-որ բան խոչընդոտում է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանը, ապա դա հենց թուրքական կողմի մոտեցումն է... Միջազգային հանրությունը գտնում է, որ գնդակը գտնվում է Թուրքիայի կիսադաշտում», նշել է Նալբանդյանը:

Արդյոք Սահմանադրական խորհուրդ դիմելու հանգամանքը «ցեղասպանության մասին օրենքը վճարկելի՞» է դարձնում, Նալբանդյանը նախ արձագանքել է. «Չեմ կարծում, որ ճիշտ է խառնվել Սահմանադրական խորհրդի որոշումների ընդունման գործընթացին, ինչը փորձում է անել թուրքական կողմը: Նրանք գլուխ են գովում Սահմանադրական խորհրդին դիմող ֆրանսիացի սենատորների հետ արդյունավետ լոբբիստական աշխատանքներ իրականացնելու համար, շնորհակալություն հայտնում Ադրբեջանին՝ այդ ուղղությամբ գործադրած ջանքերի համար: Այն սենատորները, որոնք ստորագրել էին Սխ դիմելու հայտը՝ որպես շնորհակալություն մեծ պատիվներով Բաքվում ընդունելության են արժանացել: Չեմ կարծում, թե որեւէ եվրոպական երկրում այսպիսի գործելաոճը կարող է ողջունվել: Ես ցանկանում եմ նորից շեշտել, որ ընդունված օրենքը Ֆրանսիայի ժողովրդի ջախջախիչ մեծամասնության կարծիքն է, որն արժանի է հարգանքի»:

Ավստրիական պարբերականը հետաքրքրվել է, թե ինչու «չի իրականացվում պատմաբանների համատեղ հանձնաժողովի ստեղծումը, ինչում Թուրքիան, ինչպես ինքն է ասում, շատ հետաքրքրված է»: Նալբանդյանը հիշեցրել է, որ, նախ, պայմանավորվածություն է եղել «սահմանների բացումից, դիվանագիտական հարաբերությունների հաստատումից հետո ստեղծել միջկառավարական հանձնաժողով, որի շրջանակներում կգործեն մի շարք ենթահանձնաժողովներ»: «Դրանցից մեկը ոչ թե պատմաբանների ենթահանձնաժողով է՝ ճնարկելու Հայոց ցեղասպանության լինելու կամ չլինելու փաստը, ինչպես ներկայացնում է թուրքական կողմը: Դրա միակ նպատակը երկխոսության միջոցով՝ ներառյալ պատմական հարթությունը, վերականգնել երկու ժողովուրդների միջեւ վստահությունը»:

Բազմաթիվ երկրների եւ միջազգային կազմակերպությունների կողմից ճանաչված Ցեղասպանության փաստը, ըստ Նալբանդյանի խոսքի, ճնարկման ենթակա չէ: «Կարո՞ղ եք պատկերացնել, հրեաներին հավիրել բանավեճի՝ ճնարկելու Հոլոքոստի եղելության փաստը»:

«Լեռնային Ղարաբաղի... հարցի լուծման հիմնական խոչընդոտ է այն, որ Հայաստանը գրավել է ադրբեջանական տարածքի զգալի մասը», հարցին Նալբանդյանը պատասխանել է. «Ի պատասխան Ադրբեջանի ագրեսիայի՝ Ղարաբաղի ինքնապաշտպանության ուժերը՝ ժողովրդի ֆիզիկական ապահովությունը երաշխավորելու նպատակով, սփոփված էին անվտանգության բուֆերային գոտի ձեւավորել Ղարաբաղի շուրջը: Տարածքների վերադարձը Մինսկի խմբի եռանախագահների ներկայացրած ընդհանուր բանակցային փաթեթի տարրերից մեկն է: Սակայն եթե Ադրբեջանը շեշտը դնում է միայն տարածքների վերադարձի վրա եւ շրջանցում է առաջարկների մնացած բոլոր ասպեկտները, դրան ի պատասխան ԱՄՆ պետքարտուղար Հիլարի Քլինթոնը 2010 թ. Ասանայում՝ երեք համանախագահների անունից, հայտարարել է, որ ներկայացված առաջարկությունների բոլոր սկզբունքներն ու տարրերը մշակվել են որպես մեկ ամբողջականություն, եւ դրանք տարանջատելը կամ մեկին մյուսի հանդեպ առավելություն տալն անընդունելի է»:

Ա. ՀԱԲՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Աֆղանստանում ՄԱԿ-ի աշխատակիցները կտեղափոխվեն ապահով շրջաններ

Աֆղանստանում ՄԱԿ-ի շենքերի վրա կատարված հարձակման կապակցությամբ ներկայացուցչության ղեկավարությունը որոշել է անձնակազմի մի մասին տեղափոխել առավել ապահով շրջաններ: Շաբաթ օրը Կունդուզի նահանգում (հյուսիս) զայրացած ցուցարարները գրոհել էին ՄԱԿ-ի ներկայացուցչությունը, բողոքելով Ղուրանի օրինակների այրման դեմ:

ՄԱԿ-ի ներկայացուցչության հայտարարության մեջ նշվում է, որ դեպի Աֆղանստանի այլ շրջաններ աշխատակիցների տեղափոխությունը «ժամանակավոր բնույթ է կրում»: Աշխատակիցների անվտանգությունն ապահովելու նպատակով կձեռնարկվեն հավելյալ միջոցներ, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը:

Անկարգությունների առիթը ՆԱՏՕ-ի «Բագրամ» ռազմակայանի միջադեպն է, որտեղ օրերս ամերիկացի զինծառայողներն այրել էին աֆղաններից առգրաված Ղուրանի եւ այլ սրբազան տեքստերի օրինակներ: Կունդուզում մոլեգնած ցուցարարներին հաջողվել էր հրկիզել ՄԱԿ-ի շենքերից մեկը: Պահապանները կրակ էին բացել ամբոխի վրա, սպանելով 4 եւ վիրավորելով տասնյակ մարդկանց: Աֆղանստանի տարբեր քաղաքներում բողոքի տարերային ցույցերի ժամանակ առնվազն 30 մարդ է սպանվել:

Ասադը ստորագրեց նոր սահմանադրության կիրարկման հրամանագիր

Սիրիայի նախագահ Բաշար Ասադը երեկ հրամանագիր է ստորագրել հանրաքվեության նոր սահմանադրությունը կիրարկելու եւ «Ալ Ջարիդա ար-ռասմիա» պաշտոնաթերթում հրապարակելու վերաբերյալ:

Երկրի նոր հիմնական օրենքը ընդունվել էր փետրվարի 26-ի հանրաքվեի ժամանակ: Հանրաքվեության ներքգործնախարար Մուհամմեդ աշ Շաարը երեքշաբթի օրը հայտարարեց, որ հանրաքվեին մասնակցել է 8,4 մլն մարդ կամ քվեաթերթիկներում ընդգրկված անձանց 57,4 տոկոսը:

«Նորացված Սիրիայի կառուցմանը» ծառայող նոր սահմանադրության օգտին արտահայտվել է հանրաքվեի մասնակիցների 89,4 տոկոսը, նշում է ԻՏԱՌ-ՏԱՍՍ գործակալությունը:

Փաստաթղթի տեքստը մշակած հատուկ հանձնաժողովի կազմում կային նշանավոր իրավաբաններ, գիտնականներ, քաղաքական եւ հասարակական գործիչներ: Ըստ նոր սահմանադրության, երկրում վերացվում է գրաքննությունը, մտցվում է բազմակուսակցական համակարգ, սահմանափակվում է մեկ անձի նախագահական ժամկետների թիվը:

Միեւնույն ժամանակ ընդդիմախոսները պնդում են, որ նույնիսկ նոր սահմանադրությունը պահպանում է նախագահի գրեթե անսահմանափակ իշխանությունը եւ էականորեն սահմանափակում կուսակցություններում միավորվելու քաղաքացիների իրավունքները:

ԴՈՒՌԸ ԲԱՑՎՈՒՄ Է

ԵՄ արտգործնախարարները կողմ են Սերբիայի անդամակցությանը

Եվրոմիության անդամ երկրների արտգործնախարարները պայմանավորվել են Սերբիային շնորհել ԵՄ-ի անդամության թեկնածուի կարգավիճակ: Այդ մասին հաղորդում է Ֆրանսպրես գործակալությունը, վկայակոչելով Ֆրանսիայի արտգործնախարար **Ալեն Ժյուպեին**:

Նրա խոսքերով, ներկա պահին Եվրոմիությունը որեւէ առարկություն չունի Սերբիայի թեկնածության դեմ: Մարտի 1-2-ը կայանալիք ԵՄ գագաթաժողովը պետք է հաստատի Սերբիայի կարգավիճակին առնչվող որոշումը:

ԵՄ-ի երկրների արտգործնախարարները գտնում են, որ Սերբիան կատարել է կազմակերպությանն անդամակցելու համար անհրաժեշտ բոլոր պայմանները, ուստի, ամենայն հավանականությամբ, կստանա թեկնածուի կարգավիճակ: Եվրոմիության հետ մերձենալու Բելգրադի հնարավորությունները մեծացնում է Կոսովոյի կարգավիճակի վերաբերյալ Պրիշտինայի հետ փետրվարի 24-ին ստորագրված համաձայնագիրը: 2011-ի դեկտեմբերին հենց Կոսովոյի չլուծված հարցի պատճառով հետաձգվել էր Սերբիայի ԵՄ անդամության թեկնածուի կարգավիճակի շնորհումը:

Ներկայումս Եվրոմիության անդամ է 27 պետություն, այդ թվում նախկին հարավսլավական հանրապետություն Սլովենիան: Դեկտեմբերին ԵՄ անդամակցության պայմանագիր ստորագրեց Խորվաթիան: Սպասվում է, որ նրան կազմակերպություն կընդունեն 2013-ին: ԵՄ անդամության թեկնածու է նաեւ Չեռնոգորիան:

Միջցեղային բախումներ Լիբիայում

Ելուզակախմբեր Տրիպոլիի շուրջը

Մուամմար Քադդաֆիի սպանությունից հետո ամիսներ են անցել, բայց լիբիացի ապստամբների Անցումային կառավարությունը չի կարողանում կարգուկանոն հաստատել եւ ապահովություն ստեղծել երկրում: Լիբիայի հարավ-արեւելքում՝ Կուֆրա քաղաքի շրջանում վերջերս ծագել են միջցեղային հակամարտություններ: ՄԱԿ-ի տվյալների համաձայն, բախումների ընթացքում արդեն առնվազն 100 մարդ է սպանվել, հազարավոր մարդիկ տիրված լքել են իրենց տները: Գաղթականների ստույգ թիվը հայտնի չէ, բայց ՄԱԿ-ի տվյալներով, երբեմնի 50 հազարանոց քաղաքում բնակչության կեսն էլ չի մնացել:

Ասոշիեյթեդ պրես գործակալությունը նշում է, որ փետրվարի 12-ից զինված բախումներ են սկսվել աֆրիկյան տուբու եւ արաբական զուվայա ցեղերի միջեւ: Տուբու ցեղն ապրում է Լիբիայի հարավ-արեւելքում, Չադում, Սուդանում եւ Նիգերում: Մուամմար Քադդաֆիի օրոք ցեղը ճնշումների է ենթարկվել:

Կուֆրայի միայն մեկ շրջանում հրթիռների պայթյուններից առնվազն 160 տուն է ավերվել: Մարտական գործողությունների պատճառով վերջին օրերին քաղաքում փակ են խանութները, բնակիչները վախենում են դուրս գալ փողոցներ:

Անցումային կառավարությունը իր գոյության ամբողջ ժամանակամիջոցում բախվում է բնակչության անապահովության խնդրին, քանի որ երկրում գործում են զինված եւ միմյանց թշնամի բազմաթիվ խմբավորումներ: Մի շարք քաղաքներում եւ մայրաքաղաք Տրիպոլիի շուրջը գտնվող բնակավայրերում, մասնավորապես Աջալաթում, Թաջուրում եւ Սաբրատում, անպատիժ գործում են զինված կողոպտիչների ելուզակախմբեր, որոնք հարձակումներ են կատարում տեղաբնակների տների եւ ամառանոցների վրա:

Ոստիկանությանն առայժմ չի հաջողվում սանձահարել քրեական տարրերին: «Այն տպավորությունն է ստեղծվում, որ ուժայիններն ավելի շատ զբաղվում են նախկին վարչակարգի կողմնակիցների որոնումներով, քան անվտանգության եւ իրավակարգի ապահովմամբ», նշում են ականատեսները:

Մայրաքաղաք Տրիպոլիում եւս իրադրությունն անհանգիստ է եւ անապահով: Մութն ընկնելուց հետո մարդիկ ջանում են փողոց դուրս չգալ առանց ծայրահեղ անհրաժեշտության:

Հայ-իտալական բարեկամությունը դարերի պատմություն ունի

Երեկ Հայաստանում Իտալիայի դեսպանությունում կայացավ «Նեապոլի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցի» երկլեզու՝ հայերեն եւ իտալերեն հրատարակված կատալոգի շնորհանդեսը: Կատալոգի տպագրությունն իրականացրել են ՀՀ մշակույթի նախարարությունը եւ ՀՀ-ում Իտալիայի դեսպանությունը: Շնորհանդեսը բացեց եւ ներկա լրագրողներին ու զբոսաշրջությամբ զբաղվող գործակալության ներկայացուցիչներին ողջունեց դեսպան **Բրունո Սկապինին** նշելով. «Ինձ համար մեծ պատիվ է այսօր այստեղ ձեզ ընդունելը եւ նաեւ ներկայացնելու հայ-իտալական նախագիծը, որը թվում է, թե փոքր է իր չափերով, սակայն շատ մեծ է իր նշանակությամբ»:

Մշակույթի փոխնախարար **Արթուր Պողոսյանը** նախ խոսեց հայ-իտալական մշակութային համագործակցության մասին, որի արդյունքում ընդգրկված են բազմաթիվ ու բազմաբնույթ ծրագրեր ազգային արժեքների պահպանման եւ վերականգնման ուսուցման շուրջ: Պրն Պողոսյանը խորհրդանշական համարեց, որ Հայ գրատպության 500-ամյակի հոբելյանական անդրանիկ միջոցառումը մեկնարկել է Իտալիայում անցած դեկտեմբերի 14-ին՝ Վենետիկում կայացած «Հայաստան, քաղաքակրթություն, դրոշմներ» խորագրով ցուցահանդեսի շրջանակներում: Իսկ թե ինչո՞ւ հենց Վենետիկից, որովհետեւ առաջին հայկական տպագիր գրքի օրրանը հանդիսանում է Վենետիկը: Հայ-իտալական խոր կապերը եւ համագործակցության կարեւոր գործառույթներից է 2011-ին երկու երկրների միջեւ ստորագրված գիտատեխնիկական, մշակութային համագործակցության պայմանագիրը, որով իտալական կառավարության կողմից տրամադրվող դրամաշնորհի արդյունքում Հայաստանում ստեղծվելու է մեծ, տարածաշրջանային կենտրոն, որն իր մեջ ներառելու է մի շարք ոլորտներ: Դրանց թվում են՝ հուշարձանների եւ մշակութային արժեքների վերականգնման լաբորատորիայի ստեղծում, նեղ մասնագետների ուսուցմամբ կրթական ծրագրեր, մասնագետների վերապատրաստում երկու երկրներում եւ այլն: Համաձայնագրի նախապատրաստական աշխատանքները սկսված են եւ արդեն Իտալիայի կառավարությունը մոտ 1 միլիոն 200 հազար եվրո է տրամադրում այդ ծրագրի իրականացմանը, տեղեկացրեց փոխնախարարը եւ շնորհակալություն հայտնեց դեսպանին ու Իտալիայի կառավարությանը:

Դեսպան Սկապինին ներկայացրեց նախագիծը, որի շրջանակներում տպագրվել է կատալոգը, որում ներկայացված են Նեապոլի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայկական եկեղեցում գտնվող 17-րդ դարի իտալացի հայտնի նկարիչ Լուկա Ջորդանոյի կողմից ստեղծված որմնանկարները: Ի դեպ, դրանց լուսանկարչական ցուցահանդեսը «Իտալերենի համաշխարհային 10-րդ շաբաթվա» շրջանակներում կայացավ 2010 թ. հոկտեմբերին Հայաստանում Իտալիայի դեսպանությունում: Ընդունելությունների սրահում, որտեղ կայացավ կատալոգի շնորհանդեսը, ցուցադրված էր այդ որմնանկարների լուսանկարները եւ դրանց մասին հետաքրքրական բացատրություն էր տալիս դեսպանը: Նա շեշտեց, որ 1580-ականներին կառուցված եկեղեցին օծվել է հայ եւ հույն միանձնուհիների կողմից, որոնք Գրիգոր Լուսավորչի մասունքները (գանգը) բերել են Նեապոլ: Դրանք այժմ գտնվում են «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» եկեղեցում: Իսկ եկեղեցին գտնվում է Նեապոլի ամենահին փողոցներից մեկում, որը նույնպես կրում է Գրիգոր Լուսավորչի անունը: Նշենք, որ Սբ Գ. Լուսավորչի աջը գտնվում է Էջմիածնում, ձախը՝ Սիսում: Դեսպանը հպարտորեն նշեց, որ Նեապոլի Սբ Գ. Լուսավորիչ եկեղեցին դարձել է հոգեւոր կենտրոն ու ուխտատեղի ոչ միայն քրիստոնյա, այլեւ կաթոլիկ հավատացյալների համար:

«**Ազգի**» հարցին, թե կարծիք կա, որ հայերն ու իտալացիները խառնվածքով շատ նման են, դուք դա զգացե՞լ եք, ասաց. «Միանշանակ կիսում եմ ու հաստատում ձեր կարծիքը: Իտալիայի կենտրոնի եւ հարավային հատվածի ժողովուրդները նման են իրար եւ բնավորությամբ եւ զգացմունքայնությամբ: Հայերը հենց այդ մասերում են շատ կենտրոնացված ու երկու ժողովուրդների դարավոր բարեկամությունը սերտաձել է նաեւ այդ ուղղությամբ»:

ՄԱԲԻԵՏԱ ՄԱԿԱԲՅԱՆ

Գրքեր՝ արդեն թվային տարբերակով

Վերջերս սկսվել են Հայաստանի գրադարանների հավաքածուների թվայնացումը, որի մասին երեկ հրավիրված մամուլի ասուլիսի ժամանակ խոսեց Ազգային գրադարանի տնօրեն Տիգրան Զարգարյանը. «Թվայնացումը բավականին բարդ աշխատանք է, քանի որ գրադարաններում ունենք միլիոնավոր հատորներ եւ այդ ամբողջ ժառանգությունը թվայնացնելը կտեւի երկար: 2001թ. հասկանալով դրա կարեւորությունը՝ Ազգային գրադարանը, Գիտությունների Ազգային ակադեմիայի հիմնարար գիտական գրադարանը, Երեւանի Պետական համալսարանի գրադարանը, Գիտաբժշկական գրադարանը եւ Գրաղալատը սկսեցին թվայնացնել գրքերը: Վերոնշված գրադարաններին միացան Երեւանի Ճարտարագիտական համալսարանի գրադարանը, Գիտատեխնիկական գրադարանը, Խնկո Ապոր մանկական գրադարանը: Սկսեցինք էլեկտրոնային քարտարանների ձեւավորումից, քանի որ ընթերցողի համար առաջնային ռեսուրսը դա քարտարանն է: Շնորհակալ ենք Բաց հասարակության ինստիտուտին հովանավորելու համար»:

Արդեն տասը տարի է, որ այդ գործընթացը տեղի է ունենում եւ ուրախությամբ կարող ենք նշել, որ ունենք արդեն մեկ միլիոն գրառում համահավաք գրացուցակում՝ էլեկտրոնային քարտարանում: Հաջողելով այս աշխատանքը, Ազգային գրադարանը որոշեց թվայնացնել նաեւ տեքստային նյութեր, որոնք ավելի մեծ հետաքրքրություն են վայելում: Ազգային գրադարանը հայագիտական ամենախոշոր պահոցն է աշխարհում, որտեղ ունենք ահռելի քանակի տպագիր նյութեր՝ թե՛ մամուլից, թե՛ հնատիպ գրքերից: Ազգային գրադարանի ծրագրերից է թվայնացնել նաեւ հայ պարբերական մամուլը, ստեղծել հայ հնատիպ գրքի համահավաք գրացուցակ, որը ներկայացնում է հնատիպ գիրքը մատենագիտական նկարագրությամբ, եւ կնշվեն աշխարհի այն գրադարանները, որոնցում նույն գիրքը պահպանվում է:

Անդրադառնալով Գիտության Ազգային ակադեմիայի գիտական արտադրանքին՝ ամսագրերին, դրանք եւս թվայնացվում են:

Բանախոսը ընդդիմացավ այն մարդկանց, որոնք ասում են, թե ընթերցողների թիվը նվազել է եւ նշեց. «Էլեկտրոնային քարբերակների առկայության պարագայում ընթերցողների թիվն էլ ավելի է աճել: Ինչպես գիտենք, ընթերցանությունը համացանցով ավելի տարածված է երիտասարդների շրջանում եւ ուրախալի է, որ ընթերցողների թիվը օր օրի աճում է»:

Թե երբ կավարտվի թվայնացման գործընթացը, դժվար է նշել, քանի որ, օրինակ՝ Ազգային գրադարանում կա 7 միլիոն գիրք, իսկ աշխատանքները կարելի է ասել դեռ նոր-նոր են սկսվել եւ ամբողջական թվային գրադարան ունենալու համար անհրաժեշտ է 10-ից 20 տարի:

ՄԱՆԱՆԱ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

ԳՈՐԾԵԼՈՒ ԺԱՄԱՆԱԿԸ

Փրկենք Վարագավանքը

Վանում 2011-ին տեղի ունեցած երկրաշարժի հետեւանքով լրջորեն վնասված Վարագավանքի անմխիթար վիճակի մասին է արձագանքում «Արմինյն միրոր սփեքթեյթր» շաբաթաթերթում Լոնդոնի Կոմիտաս ինստիտուտի տնօրեն, պատմաբան **Արա Սաֆարյանը**, ով հաճախ է այցելում արեւելյան Թուրքիա եւ հատկապես Վան:

Վարագավանքը միջնադարյան Հայաստանի նշանավոր կրոնական եւ մշակութային կենտրոն է եղել, Վան քաղաքից հարավ-արեւելք: Վարագ լեռան արեւմտյան լանջին: Հիմնադրվել է 7-րդ դարում: Վանական համալիրը բաղկացած է եղել վեց եկեղեցիներից, գավթից, նախասրահից եւ օժանդակ շինություններից:

Ըստ հոդվածագրի, վանքի մեծ մասը խորտակվել է 1915-ի Եղեռնի օրերին: Դրանից հետո վանքն զգալի վնաս է կրել 1960-ական թվերին, մինչ որոշ հատվածներ կանգուն մնալով դեռեւս հազարավոր զբոսաշրջիկների հետաքրքրությունն են առաջացնում եւ ստիպում նրանց այցելել այդ վայրը: Այդ զբոսաշրջիկների մեջ բացի հայերից կան նաեւ գերմանացիներ, ճապոնացիներ, իտալացիներ եւ ամերիկացիներ:

Ներկայիս վանքում առաջացած նախկին ճաքերը էլ ավելի են մեծացել եւ նորերը՝ առաջացել: Անվտանգության հարցերը դարձել են կասկածելի եւ, ըստ հոդվածի հեղինակի, ով հույս ունի որ «սխալվում է», վանքը դատապարտված է կործանման, եթե անմիջական քայլեր չձեռնարկվեն:

Այդ առումով թուրք ճարտարագետների մի խումբ վերջերս այցելել է այդ տարածքը եւ նշել, որ դեռ կարելի է փրկել վանքը: Նրանք ծրագրում են վերականգնման աշխատանքներն սկսել այս գարնանը: Նման խոստումներ, իհարկե, նախկինում էլ են եղել, բայց հետո մոռացվել:

Վարագի քրդական ավանն էլ ներկայիս սարսափելի վիճակում է: Մոտ 600 բնակիչներից (65 ընտանիքներ) մեծ մասը հողագործներ են, մի մասն էլ անգործներ: Երկրաշարժի հետեւանքով շատերն ապրում են վրանների տակ: Խոսակցություն կա, որ ամբողջ գյուղի բնակիչներին կարող են վերաբնակեցնել մի այլ վայրում: Դա, անտարակույս, դժբախտություն կլինի, որովհետեւ քրդերը մինչեւ օրս որոշակի հսկողություն են սահմանել վանքի տարածքում: Վերջին հինգ տարիներին նույնիսկ պաշտոնական պահակ էր նշանակվել Մեհմեդ Չոբանը, որը մի փոքր գումար էր ստանում կառավարությունից դրա համար: Բայց նրա ճակատագիրն էլ այժմ անորոշ է:

«Ի՞նչ բախտ է վիճակված Վարագավանքին», հարցնում է Արա Սարաֆյանը իր եզրակացության մեջ: Տեղական իշխանությունները ցանկանում են պահպանել մշակութային եւ եկեղեցական այդ եզակի կառույցը: Հայերն էլ կմասնակցե՞ն դրան: Կապրենք, կտեսնենք:

Հ. Ծ.

Գլենդեյլ

Արուեստաբան Շահէն Խաչատրեան ներկայացուց «Եղեռնի անդրադարձը հայ գեղանկարչութեան վրայ»

Կազմակերպութեամբ Կալիֆոռնիայի Հայ գրողներու միութեան եւ «Ստեֆանի» արուեստի պատկերասրահին, հինգշաբթի, փետրուարի 23-ին Գլենդեյլի հանրային գրադարանի սրահին մէջ տեղի ունեցաւ «Եղեռնի անդրադարձը հայ գեղանկարչութեան վրայ» բնանիւթով դասախօսութիւն, սահատպատկերներու ցուցադրութեամբ, ՀՀ արուեստի վաստակաւոր գործիչ, արվեստաբան Շահէն Խաչատրեանի կողմէ: «Ստեֆանի» արուեստի պատկերասրահի տէր եւ տնօրէն տկ. Լինդա Ստեփանեանը հակիրճ նախաբանով ներկայացուց դասախօսը: Ապա բանաստեղծ **Գեւորգ Քրիստինեանը** հանդիսավարեց երեկոն:

Շահէն Խաչատրեանը իր կրթութիւնը ստացած է Պետրզբուրգի Գեղարուեստական ակադեմիային մէջ, ավարտելով որպէս արվեստաբան: Երեւանի մէջ եղել է Մարտիրոս Սարեանի նորաստեղծ թանգարանին տնօրէն. միաժամանակ 1990 թուականին նշանակուած է Հայաստանի ազգային պատկերասրահին տնօրէն: Իր գործունէութիւնը, բացի արուեստագիտական տասնեակ աշխատութիւններէ, եղել է նուիրում նկարահանման, որով կրցած է Երեւանի թանգարանի համար 400 գեղանկարչական գործեր ձեռք բերել, ինչպէս 3. Այվազովսկու նշանաւոր 9 գործերը, Մ. Սարեանի 70 գործերը, եւ տասնեակ այլ գեղանկարներ: Շահէն Խաչատրեանը ուսումնասիրական բազմաթիւ յոդուածներով եւ հեռուստացուցային ելոյթներով ներկայացուցած է հայ գեղարվեստի պատմութիւնը: Նրա մենագրութիւնը Այվազովսկիի մասին արժանացել է առաջին կարգի շքանշանի Մոսկուայի մէջ:

Հայոց մեծ եղեռնի 95-ամեակին է նուիրուած նրա «Ծովի գոյն» հատորը, ուր ներկայացված են այն հայ գեղանկարիչները, որոնք հանդէս են եկած ցեղասպանութեան բնանիւթերով: Սկսեալ 1895 թուականի կոտորածներէն՝ չորս սերունդի հայ գեղանկարիչներ են ներառուած հատորին մէջ: Պէտք է ըսել, որ Շ. Խաչատրեանը առաջին արվեստաբանն է, որ դասախօսութեան նիւթ կնէ նման բնանիւթ:

Գեղարուեստական բաժնում ելոյթ ունեցաւ «Երկնային տաղեր» համոյթը սրնգահար Սալփիի եւ քնարահար Սօսիի կատարողութեամբ, երաժշտական մեծ հաճոյք պարգեւելով ներկաներուն:

Մրցաշրջանը սկսեցին փորձարարական կազմով կրած պարտությամբ

Այս տարի կազմավորման 20-ամյակը նշող Հայաստանի ազգային հավաքականն իր հոբելյանական մրցաշրջանը սկսեց Սերբիայի ընտրանուց 0-2 հաշվով կրած պարտությամբ: Որքան էլ որ սարսափելի էր ու շատերի համար անսպասելի, հավաքականի գլխավոր մարզիչ Վարդան Մինասյանը Լիմասոլի «Ցիրիոն» մարզադաշտ էր դուրս բերել փորձարարական կազմը, որում մեծ թիվ էին կազմում Հայաստանի երիտասարդական հավաքականի ֆուտբոլիստները: Սերբերի հետ հանդիպման 16 մասնակիցներից 7-ը՝ դարպասապահ Գրիգոր Մելիխսեթյանը, պաշտպաններ Անդրանիկ Ոսկանյանն ու Գագիկ Դաղբաշյանը, կիսապաշտպաններ Մասիս Ոսկանյանը, Կամո Հովհաննիսյանը, հարձակվողներ Ղուկաս և Վալտեր Պողոսյաններն իրենց նորամուտը նշեցին Հայաստանի ազգային հավաքականում: Հիմնական կազմի ֆուտբոլիստներից խաղին մասնակցեցին միայն Կառլեն Մկրտչյանը, Գևորգ Ղազարյանն ու հավաքականի ավագի պարտականությունները առաջին անգամ ստանձնած Ռոբերտ Արզումանյանը, որն իր հոբելյանական՝ 50-րդ հանդիպումն անցկացրեց:

Իհարկե, նախապես հայտնի էր, որ Վարդան Մինասյանը որոշել էր խաղալու հնարավորություն ընձեռելու հավաքական հրավիրված բոլոր 28 ֆուտբոլիստներին, սակայն անկեղծ ասած ոչ ոք չէր սպասում, որ նման կազմով մեր ընտրանին կմրցի սերբերի հետ: Գուցե ավելի ճիշտ կլիներ այդ կազմով հանդես գալ այսօր կանադացիների հետ կայանալիք խաղում: Ճիշտ է, սերբերի կազմում էլ բացակայում էին հավաքականի առաջատար մի քանի ֆուտբոլիստներ, սակայն փորձառության ու վարպետության առումով հատկապես առաջին խաղակեսում խաղադաշտում ուժերն անհավասար էին:

Հենց առաջին խաղակեսում էլ սերբերն օգտագործելով խաղային իրենց առավելությունը, 2 անգամ գրավեցին Մելիխսեթյանի պաշտպանած դարպասն ու փաստորեն վճռեցին խաղի ելքը: Հարկ է նշել, որ երկու դեպքում էլ այնքան էլ վստահ չգործեց մեր դարպասապահը՝ հետ մղելով գնդակները, իսկ պաշտպանները չկարողացան փոխապահովել նրան և թույլ տվեցին Ջդրավկո Կուզմանովիչին ու Բրոնիսլավ Իվանովիչին անարգել գնդակն ուղարկելու դարպասը: Իսկ ահա մեր ֆուտբոլիստներն առաջին խաղակեսում չկարողացան որևէ վստանգավոր պահ ստեղծել մրցակցի դարպասին: Առջևի գծում միայնակ գործող Արթուր Սարկիսովը լուրջ օժանդակություն չստանալով խաղընկերներից, վտանգ չէր ներկայացնում մրցակցի համար:

Ընդմիջումից հետո կատարված փոփոխությունների շնորհիվ ՀՀ հավաքականի գործողություններում նկատելի ակտիվություն զգացվեց: Դրան նպաստեցին նաև սերբերը, որոնք մեծ ուժերով նահանջել ու հակագրոհներին էին ապավինել: Մեր ֆուտբոլիստները վստանգավոր մի քանի պահեր ստեղծեցին , իսկ 76-րդ րոպեին նույնիսկ կարող էին կրճատել հանդիպման հաշիվը, սակայն Վալտեր Պողոսյանը մոտ տարածությունից չկարողացավ գրավել դարպասը:

Իհարկե, ՀՀ հավաքականի իրական հնարավորությունները հնարավոր կլինի գնահատել միայն կանադացիների հետ այսօր կայանալիք խաղում, որում մեր ընտրանին հանդես կգա մարսական կազմով: Հուսանք, որ այդ խաղը հաղթական կլինի մեր հավաքականի համար:

Բենիկ Իսրայելյանը Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու նոր հայտ ներկայացրեց

Վերջերս հրատարակված «Դյուցազնագրքում» իր արժանի տեղն է գտել Գինեսի ռեկորդակիր, 55-ամյա Բենիկ Իսրայելյանը, որին օրերս Գագիկ Ծառուկյանը հանձնեց ռեկորդի գրանցման հավաստագիրը:

Օրերս Բենիկ Իսրայելյանը Գինեսի ռեկորդների գրքում գրանցվելու նոր հայտ ներկայացրեց: Նա աջ ձեռքի միջնամատով բարձրացրեց 121 կգ 700 գրամ ծանրությունը եւ 8 վրկ պահեց 25 սմ բարձրության վրա: Սա հայ դյուցազունի նոր նվաճումն է, որը գերազանցում է 2011-ի հունիսի 11-ին սահմանած իր նախորդ ռեկորդը: Այդ օրը Բենիկը Գինեսի ռեկորդ սահմանեց, որն արդեն գրանցում է ստացել հանրահայտ գրքում: Ընդ որում ռեկորդը գրանցելու համար Բենիկին անհրաժեշտ էր բարձրացնել 104 կգ 300 գրամ ծանրությունը, սակայն հայ դյուցազունը գերազանցեց նորմատիվը: Նա աջ ձեռքի միջնամատով 116 կգ 900 գրամ ծանրությունը բարձրացրեց 20 սմ ու պահեց 7 վրկ: Այժմ Բենիկ Իսրայելյանը համապատասխան փաստաթղթերն է պատրաստում նոր ռեկորդը Գինեսի գրքում գրանցելու համար:

Երեւանցի Բենիկ Իսրայելյանը վաղ հասակից է զբաղվել սպորտով, մասնավորապես՝ ծանրամարտով: Տեղեկանալով «Դյուցազնագրքի» մասին, նա գտավ իր մարզաձեւը, որը կարող էր հետաքրքրել ու զարմացնել մարդկանց իր արտասովորությամբ: Քրտնաջան մարզումների շնորհիվ նրա մասն ամրացավ ու աստիճանաբար ավելացրեց բարձրացվող բեռան ծանրությունը:

Եվ ահա 2000-ի մայիսի 30-ին նա իր նորույթը ներկայացրեց «Դյուցազնագրքի» հանձնախմբին: 147 կգ ծանրությունը Բենիկը բարձրացրեց 20 սմ ու պահեց 4 վրկ: Դա «Դյուցազնագրքի» 20-րդ ռեկորդն էր:

Արավինը վերադարձավ «Զենիթ»

Ռուսաստանի ազգային հավաքականի ավագ Անդրեյ Արշավինը Լոնդոնի «Արսենալից» վերադարձավ հարազատ կոլեկտիվ: Նա «Զենիթում» հանդես կգա վարձավճարով: «Զենիթն» իր նախկին ֆուտբոլիստի համար կվճարի 1,2 մլն եվրո:

Հիշեցնենք, որ Եվրո-2008-ի ավարտից հետո Անդրեյ Արշավինը «Զենիթի» ղեկավարությունից պահանջում էր իրեն թույլատրել տեղափոխվելու Լոնդոն: Եվ Դիկ Ադվոկատի աջակցությամբ այդ տեղափոխությունը կայացավ: «Արսենալը» նրա դիմաց «Զենիթին» 16,5 մլն եվրո վճարեց: Սկզբնական շրջանում նրա գործերն Անգլիայում լավ էին ընթանում: Սակայն աստիճանաբար նրա խաղը խամրեց, որի պատճառով Արշավինը ոչ միշտ էր տեղ գրաղեցնում թիմի մեկնարկային կազմում: Իսկ բոլորովին վերջերս նա նույնիսկ հայտնվել էր թիմի փոխարինողների կազմում: Արշավինով հետաքրքրվում էր Մախաչկալայի «Անժին», սակայն ֆուտբոլիստը նախընտրեց վերադառնալ հարազատ կոլեկտիվ:

Շախմատի նոր ակումբ Կաննում

Armchess.am-ի տեղեկացմամբ ֆրանսահայ շախմատիստ եւ մարզիչ Էրիկ Սիգիրջյանի գլխավորությամբ Կաննում սկսել է գործել «Ազուր» շախմատային ակումբը: Այստեղ պատանի շախմատիստների համար պարապմունքներ են անցկացվում: Ակումբը նախատեսում է հետագայում մասնակցել Ֆրանսիայի շախմատի թիմային առաջնությանը:

ԳԵՂԱՍՍԱՀԻ

Սլավիկ Հայրապետյանը մտավ եզրափակիչ

Մինսկում մեկնարկած գեղասահիի մինչեւ 20 տարեկանների աշխարհի առաջնությունում հաջող է հանդես գալիս Հայաստանի միակ ներկայացուցիչ Սլավիկ Հայրապետյանը: 15-ամյա պատանին հաջողությամբ է հաղթահարել որակավորման փուլի արգելքը: Նա այս փուլի 25 մասնակիցների մեջ 88,31 միավորով զբաղեցրել է 11-րդ տեղն ու իրավունք է ստացել հանդես գալու եզրափակիչում:

Սլավիկ Հայրապետյանը կմասնակցի մարտի 1-ին կայանալիք եզրափակիչ փուլի կարճ ծրագրի մրցումներին: Այստեղ հանդես կգան 30 գեղասահորդներ: Լավագույն արդյունքի հասած 24 գեղասահորդներն իրավունք կստանան մասնակցելու ազատ ծրագրի մրցումներին, որոնք տեղի են ունենալու մարտի 3-ին: Հենց այդ մրցումներն էլ ի հայտ կբերեն գեղասահիի աշխարհի առաջնության մրցանակակիրներին:

Հայ շախմատիստների հաջող մեկնարկը

Ֆրանսիայի Ռոշֆոր քաղաքում ընթացող շախմատի միջազգային մրցաշարի 60 մասնակիցների թվում են Հայաստանը ներկայացնող Գեւորգ Հարությունյանը, վրացահայ Դավիթ Հարությունյանն ու բրազիլահայ Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը, որոնք հաջող են մեկնարկել:

4 տուրից հետո Գրիգոր-Սեւակ Մխիթարյանն ու Դավիթ Հարությունյանը 3,5-ական միավորով առաջատարների խմբում են, իսկ Գեւորգ Հարությունյանն ունի 3 միավոր: Նրանք մեկնարկում 3 անընդմեջ հաղթանակ էին տոնել:

Մխիթարյանը հաջորդաբար հաղթեց Էրիկ Էգրետեաուին, Ջուլիեն Սադային եւ Գիլյերմե Աբդալային, իսկ 4-րդ տուրում հաշտություն կնքեց Դավիթ Ջոջուայի հետ: Դավիթ Հարությունյանն էլ Ռոման Բիլիուեզին, Քրիստոֆեր Դեբրային եւ Վինսենտ Կոլինին հաղթելուց հետո ոչ-ոքի խաղաց Ալեքսեյ Բարսովի հետ: Իսկ ահա Գեւորգ Հարությունյանը Լուկ Լերիչեի, Ելենա Բորիչի եւ Էզրա Կիրկի նկատմամբ առավելության հասնելուց հետո պարտվեց մրցաշարի առաջատար Ալեքսանդր Ֆիեռին, որը 4 միավորով միանձնյա գլխավորեց աղյուսակը:

5-րդ տուրում Դավիթ Հարությունյանն ու Գրիգոր-Սեւակ Մխիթարյանը կմրցեն միմյանց հետ, իսկ Գեւորգ Հարությունյանի մրցակիցը կլինի Ալեքսեյ Բարսովը:

Անթալիայում «Ուլիսը» 5 խաղ կանցկացնի

Հայաստանի չեմպիոն «Ուլիսն» ուսումնամարզական վերջին հավաքն անցկացնում է Թուրքիայի Անթալիա քաղաքում: Մարզումներին մասնակցում են 21 ուլիսցիներ: Թիմի հետ Թուրքիա չեն մեկնել վնասվածք ունեցող Ալբերտ Թադեւոսյանը եւ «Ուլիսի» նորեկ Գեորգի Մանուկավան, որի հայրը վատառողջ է:

«Ուլիսի» գլխավոր մարզիչ Սեւադա Արզումանյանը ավելի վաղ էր մեկնել Թուրքիա, որպեսզի տեղում ծանոթանար պայմաններին ու ստուգողական հանդիպումների անցկացման վերաբերյալ պայմանավորվեր մրցակիցների հետ:

«Ուլիսն» Անթալիայում ստուգողական առաջին հանդիպումը կանցկացնի այսօր: Մրցակիցը կլինի Բելառուսի առաջնության բրոնզե մեդալակիր «Գոմելը»: Մարտի 3-ին ուլիսցիները կմրցեն բելառուսական մեկ այլ ակումբի՝ բարձրագույն խմբում 8-րդ տեղը զբաղեցրած Գրոդնոյի «Նեմանի» հետ: Հաջորդ օրը «Ուլիսը» 2-րդ կազմով կխաղա Ռուսաստանի 2-րդ խմբի առաջնության մասնակից «Սլավյանսկիի» հետ: Հաջորդ հանդիպումը նախատեսված է մարտի 7-ին ՌԴ-ի առաջին խմբի առաջնությունում 6-րդ տեղում ընթացող Բրյանսկի «Դինամոյի» հետ: Վերջին խաղը ՀՀ չեմպիոնը կանցկացնի մարտի 10-ին Բելառուսի բարձրագույն խմբի առաջնության մասնակից Ժոդինոյի «Տորպեդոյի» հետ: Մարտի 11-ին «Ուլիսը» կվերադառնա Հայաստան ու տեղում կնախապատրաստվի «Իմպուլսի» հետ կայանալիք ՀՀ գավաթի կիսաեզրափակիչ հանդիպմանը:

Պովետկինը պահպանեց տիտղոսը

Գերծանրքաշային կարգում WBA-ի վարկածով աշխարհի ներկայիս չեմպիոն Ալեքսանդր Պովետկինը հաջողությամբ պաշտպանեց իր տիտղոսը: Շտուտգարտում կայացած մենամարտում նա միավորներով (114-114, 116-113, 116-112) պարտության մատնեց գերմանացի Մարկո Հուկին: Պրոֆեսիոնալ ռինգում Պովետկինը 24-րդ հաղթանակը տոնեց: Նա առայժմ անպարտելի է: Մարկո Հուկի համար այդ մենամարտը 36-րդն էր: Նա 2-րդ պարտությունը կրեց: Չնայած պարտությանը, Հուկը պահպանեց առաջին ծանրքաշային կարգում WBO-ի վարկածով աշխարհի չեմպիոնի իր տիտղոսը:

Առաջին ռաունդն անցավ հավասար պայքարում: 2-րդ ռաունդում Պովետկինը տիրեց նախաձեռնությանը: 7-րդ ռաունդում Պովետկինը ուժգին հարված ընդունեց, սակայն հետագայում ինքը ճնշում գործադրեց մրցակցի վրա, որի արդյունքում Հուկի դեմքին կապտուկներ առաջացան: Մրցավարները նախապատվությունը տվեցին ռուսաստանցի բոնցքամարտիկին:

Մենամարտից հետո բոնցքամարտիկները հետեւյալ կարծիքն են արտահայտել:

Ալեքսանդր Պովետկին- Չեմ կարող ասել, թե ինչու այսպիսի ընթացք ունեցավ մենամարտը: Հավանաբար, թերագնահատեցի մրցակցիս: Սկզբում ամեն ինչ ինձ համար նորմալ էր ընթանում, սակայն վերջնամասում դժվարությունների հանդիպեցի: Պարզապես հոգնել էի: Գուցե այնքան էլ լրջորեն չէի տրամադրվել այս մենամարտին:

Մարկո Հուկ-Պովետկինը չի կարողանում ոտքի վրա կանգնել ու նրան չեմպիոն են հռչակում: Այսօր հաղթեց Զաուեռլանդը: Շատերը համարում են, որ այս մենամարտում ես եմ հաղթել, քանի որ իմ հարվածներն ավելի դիպուկ էին:

Էջը պատրաստեց ԱՇՈՏ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

ԱԶԳ

Օրվա հետքով

Վրաստանից բացակա չինովնիկը՝ ադրբեջանցիների միջոցառմանը ներկա՞

Ադրբեջանական քարոզչությունն ամենայն վստահությամբ ու երբեմն արդյունավետորեն օգտագործում է համացանցը՝ սուտն ու կեղծիքն առավել տարածված դարձնելու նպատակով, բայց նույն այդ համացանցի շատ հաստկություններ կեղծիք ծնող-սնողները հաճախ մոռանում են: Ի մասնավորի, որեւէ զեղծարարություն, կեղծիք ու սահող մեկնաբանություն համացանցում հայտնվելուց հետո թերեւս որոշակի ընթերցասրահ ձեռք է բերում, սակայն միանգամից ենթարկվում է «սի ոսֆը կարճ է» խոսքի «մկրատին»:

Խոջալուի դեպքերի առնչությամբ սեփական ժողովրդին ցեղասպանված տեսնելու ցանկությունն ադրբեջանցիների մեջ թերեւս այնպիսի մակարդակի է հասել, որ այս օրերին կեղծիքն ու անհեթեթությունն ուղղակի աչք էին ծակում, թեեւ, պետք է փաստել, երբեմն դրանց քանակը կարող է դառնալ որեւէ մեկի անտեղյակ ուղեղում ձեւավորված պատկեր, որ թեեւ սխալ է, բայց կարող է ապրել երկար:

Մի քանի օր առաջ Վրաստանում Ադրբեջանի դեսպանությունը հաղորդագրություն էր տարածել, թե Խոջալուին վերաբերող միջոցառումներին մասնակցություն էր ունեցել, ի թիվս ադրբեջանցիների, նաեւ Վրաստանի ադրբեջանաբնակ Քվեմո Քարթլիի Շրջանի ղեկավար Դավիթ Կիրկիտաձեն: Ավելին, իբր Վրաստանի Գիտությունների ակադեմիայում անցկացվել էր կոնֆերանս նույն թեմայով:

«**Ազգի**» տեղեկություններով, Խոջալուի դեպքերի սեփական մեկնաբանությունը Վրաստանում տարածելու ադրբեջանական փորձերին Քվեմո Քարթլիի Շրջանը որեւէ կերպ չի մասնակցել, իսկ Դավիթ Կիրկիտաձեն այդ ժամանակահատվածում անգամ Վրաստանում չի եղել: Իսկ մասնակից, նույն Շրջանի փոխնահանգապետ Հուսեյն Յուսոբովը Վրաստանի ադրբեջանցիների կոնգրեսի նախագահն է, ինչ հանգամանքով էլ մասնակցել է միջոցառումներին:

Ավելին, պարզվում է, որ ադրբեջանցիների կազմակերպած միջոցառումներին չեն մասնակցել ո՛չ Վրաստանի գիտությունների ակադեմիան, ո՛չ Վրաստանի արտաքին գործերի նախարարությունը, չնայած այդ մասին եւս ադրբեջանական կողմը հաղորդագրություն էր տարածել:

Վրացական տարածքում այսօրինակ ստերի տարածումը լրիվ տեղավորվում է այն տրամաբանության մեջ, ինչով առաջնորդվել են հարեւան երկրի որոշ ներկայացուցիչներ, երբ, օրինակ, տարածել են, թե «France 24» հեռուստաընկերությունը եթեր էր հեռարձակել Խոջալուի դեպքերի հետ կապված ադրբեջանական տեսակետը: «Panorama.am»-ին «France 24» հեռուստաընկերության ֆրանսալեզու եթերի համար պատասխանատու խմբագրության տնօրեն **Ֆիլիպ դի Նասերը** հերքել էր, հավաստիացնելով, որ նման նախագիծ հեռուստաընկերությունը չի ունեցել:

Նույն կերպ ադրբեջանական կայքէջերը տարածել էին տեղեկություն, թե Գերմանիայի Դաշնային Հանրապետության Բունդեսթագը փաստաթուղթ է ընդունել, որում 1992-ի Աղդամի դեպքերի վերաբերյալ ներկայացված է եղել այսպես կոչված «Խոջալուի դեպքերի» ադրբեջանական տեսակետը: «Արցախի եվրոպական կենտրոն» հասարակական կազմակերպությունն էլ, մերկացնելով ապատեղեկատվությունը, տարածել էր հաղորդագրություն, ըստ որի Բունդեսթագի պաշտոնական կայքէջում նշյալ դիմում եւ դրա հիման վրա իբր ընդունված փաստաթուղթ բացակայում է:

Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Եվրոմիության՝ Ադրբեջանին ուղղված «կտցոները»

1-ին էջից

Փաստաթղթի 24-րդ կետով էլ ԵՄ արտգործնախարարները մտահոգություն են հայտնում ղարաբաղյան հակամարտության կարգավորման բանակցությունների «դանդաղ առաջընթացի» առնչությամբ, իր շարունակական աջակցությունը հայտնելով ԵԱՀԿ Մինսկի խմբին եւ շեշտելով ՌԴ նախագահ Դմիտրի Մեդվեդեւի ջանքերը առաջընթացի հասնելու եռակողմ քննարկումներում:

«ԵՄ-ն վերահաստատում է իր աջակցությունը մադրիդյան սկզբունքներին եւ Հայաստանին ու Ադրբեջանին կոչ անում ավելացնել ջանքերը այդ սկզբունքների հիման վրա խաղաղ համաձայնագրի հասնելու համար», նշվում է փաստաթղթում, ինչը եւս Ադրբեջանին ուղղված հստակ ձեւակերպում է առ այն, որ մադրիդյան սկզբունքներով բանակցությունները պետք է շարունակվեն՝ հակառակ Բաքվի տարատեսակ ու տարբեր ուղղություններով բանակցային գործընթացը շեղելու հայտարարությունների:

Ղարաբաղյան հարցով այս ձեւակերպումների կողքին Հարավային Օսիայի եւ Աբխազիայի խնդիրների առնչությամբ ԵՄ-ն նույն փաստաթղթում իր ամբողջական աջակցությունն է հայտնում «Վրաստանի տարածքային ամբողջականությանն ու ինքնիշխանությանը՝ իր միջազգայնորեն ճանաչված սահմաններում»՝ շարունակելով մտահոգ մնալ «Վրաստանից անջատված Աբխազիայում եւ Հարավային Օսիայում ռուսական ռազմական եւ անվտանգությանն առնչվող ներկայությամբ»: ԵՄ-ն նույն համատեքստում Ռուսաստանին կոչ է արել կատարել 2008-ի օգոստոսի 12-ի զինադադարի համաձայնագրով իր պարտավորությունները:

Հարավկովկասյան տարածաշրջանի բազմավեկտոր խնդիրների առկայությամբ հանդերձ՝ Եվրոմիության կողմից այս տարածաշրջանի առնչությամբ փաստաթղթի ընդունումը, որ նախ վկայում է առավել կանխատեսելի տարածաշրջան տեսնելու ցանկությամբ, նաեւ յուրահատկություն երկրի՝ Հայաստանի, Ադրբեջանի եւ Վրաստանի առումով է եզրահանգումներ պարունակում:

Մասնավորապես, Հայաստանի պարագայում ողջունելով Հայաստան-ԵՄ բանակցությունների առաջընթացը՝ ԵՄ արտաքին հարցերի խորհուրդն ընդգծել է սպասվող խորհրդարանական եւ նախագահական ընտրությունների մեծ կարեւորությունը, որպեսզի դրանք համապատասխանեն միջազգային ժողովրդավարական նորմերին: Այդ ընտրություններին ամենայն ուշադրությամբ հետեւելու մասին նշելով՝ փաստաթուղթը նաեւ ընդգծում է կոռուպցիայի դեմ պայքարի արդյունավետության կարեւորությունը. «Այս ոլորտում իրական առաջընթացը մեծ կարեւորություն ունի տնտեսական աճի ու զարգացման համար»:

Սարերի գարունը մեկ գավաթի մեջ

ՍԱՐԻ ԹԵՅ

ՈՒՐՑԻ ԵՎ ԴԱՂՁԻ ԸՆՏԻՐ ԹԵՅ

25 փաթեթ մեկ տուփի մեջ
եւ ընդամենը 1-2 րոպեից կարող եք
վայելել ընտիր որակի ուրցի թեյ

SARI TEA MOUNTAIN TEA

առնվազն ամիսը մեկ արժե ընտրել բարձրորակը

Մեծածախ գնումների համար զանգահարել 47-27-20, 47-03-63

Վաճառվում է
Daewoo Matiz Best
մակնիշի ավտոմեքենա 2008 թ., շարժիչը 1լ, վազքը՝ 5000 կմ, արծաթագույն, ունի կոնդիցիոներ, հայելիները եւ աղակիները էլեկտր. (full), գործարանային վիճակ:
Հեռ.՝ (091) 32-88-89

ՎԱՐՁՈՎ Է ՏՐՎՈՒՄ
ավտոտնակ-պահեստ (11մx4մx3մ) չափերի «Ֆիրդուսնոցի» հարակից տարածքում:
093-42-57-92

ԿԱԼԻՖՈՐՆԻԱ

Պրոֆ. Հյուսենի դասախոսությունը Մխիթարյանների մասին

Պրոֆ. Ռոբերտ Հյուսենը մարտի 4-ին Կալիֆոռնիայի «Միշըն հիլզ» թաղամասում գտնվող Արարատ-Էսֆիծյան թանգարանի Հասմիկ Մկրտիչյանի անվան դահլիճում դասախոսություն է կարդալու «Մխիթարյանների նպաստը Հայկական վերածննդյանը» թեմայով, տեղեկացնում է այդ առթիվ ստացված հաղորդագրությունը:

Անգլերեն լեզվով դասախոսությունը, որի կազմակերպիչներն են վերոնշյալ թանգարանը, «Մշակույթի հայ երազողները» կազմակերպությունը եւ Հայկական ուսումնասիրությունների հետազոտությունների ազգային ասոցիացիան (ՆԱԱՍՐ), հիմնականում անդրադառնում է Մխիթար Սեբաստացու հիմնադրած Մխիթարյան միաբանության կրթական եւ հրատարակչական գործունեությանը:

Պրոֆ. Հյուսենը իր դոկտորականն է պաշտպանել Ջորջթաունի համալսարանում, որտեղ նա հայ եւ կովկասյան ժողովուրդների պատմությունն է ուսումնասիրել պրոֆ. Թուրմանովի ղեկավարության ներքո: 1967-1999 դասավանդել է ռուսական եւ բյուզանդական պատմություն Նյու Ջերսիի Ռոուն համալսարանում: Տարբեր առիթներով դասախոսություններ է կարդացել հայոց պատմության վերաբերյալ թեմաներով: Թարգմանել է Անանիա Շիրակացու «Հայոց աշխարհագրությունը»: Հեղինակ է «Հայաստան: Պատմական ատլաս» կոթողային աշխատության եւ բազմաթիվ հոդվածների:

Հ. Ծ.

Ադրբեջանական կեղծիքը անկառավարելի չափերի է հասնում

1-ին էջից

Ինչպես վերջին մի քանի տարիներին, այնպես էլ այս տարի Ազեր Չեխ ադրբեջանական միությունը Պրահայում կազմակերպել էր Խոջալուին նվիրված միջոցառում՝ վրանային սեղանիկ տեղադրելով քաղաքի կենտրոնական մասում եւ քարոզչական բուկլետների հետ նաեւ սուրճ, թեյ ու թխվածքներ մատուցելով անցորդներին:

Հայկական համայնքի ներկայացուցիչներն էլ նույն տարածքում բաժանում էին ադրբեջանական կեղծիքը հերքող թերթիկներ ու բուկլետներ: Ըստ էության հասարակ չեխ անցորդի համար նույնն է, թե ինչ է այնտեղ բաժանվում, կարեւորն անվճար սուրճն ու թխվածքն է: Իսկ բուկլետները սեղանիկից տասը մետր այն կողմ հաճախ հայտնվում էին աղբարկղերում: Ու քանի որ ադրբեջանցիները տարալված էին համարել այդ օրվա միջոցառումը, հաջորդ օրը մի այլ դասարկ հրապարակում սեղանիկ էին դրել եւ կրկնել իրենց ակցիան՝ իրենք իրենց առաջ ելույթ ունենալով :

Ինչպես միշտ ելույթներ են ունեցել Չեխիայում Ադրբեջանի դեսպանը, համայնքի ներկայացուցիչն ու խոջալուիի ինչ որ նախկին բնակիչ, որը կրկին Խոջալուն համեմատել է չեխական Լիդիցե գյուղի հետ, որը 1942 թվականին ոչնչացրել են ֆաշիստները: Ընդհանրապես Լիդիցեն դարձել է ադրբեջանցիների շահարկման սիրելի թեման: Ամենուր գրում են, որ ոչիր քաղաքներ են, որ փողոցներ են բացել: Այս ամենը սուտ է: Մեր նոր հարցումին, թե ադրբեջանական այս կեղծիքը որքանով է համապատասխանում իրականությանը, Լիդիցեի քաղաքապետ Վերոնիկա Կելլերովան պատասխանել է, որ երբեւէ որեւէ պայմանագիր չի կնքվել Խոջալու քաղաքի հետ, առավել եւս այդ անունով փողոց չկա Լիդիցեում: Նոր Լիդիցեում փողոցները անվանել են միայն ի հիշատակ Երկրորդ Համաշխարհային պատերազմի մարդկային ողբերգության: Իսկ Խոջալուի ներկայացուցիչը համագործակցության մասին պայմանագիր է ստորագրել միայն Լիդիցեի թանգարանային համալիրի հետ: Ի դեպ, ադրբեջանցիները պլանավորել էին նաեւ Խոջալուի ողբերգության 20 տարին նշել Լիդիցեի թանգարանային համալիրում, սակայն ստացել են մերժում:

Եվ թվերի հետ կապված մի կեղծիք նույնպես, որն այս տարի առկա է ադրբեջանական բուկլետներում, դա Խոջալուում զոհված երեխաների թիվն է: Մի տեղ գրված է 63 երեխա, մի այլ տեղ՝ 83 : Այսինքն, որպեսզի Լիդիցեում ցույց տան, թե Խոջալուի ողբերգության ժամանակ էլ 83 երեխա է զոհվել, նրանք քանով զոհված երեխաների թիվը բարձրացրել են: Ավելին, եթե այսօր զոհերի ընդհանուր թիվը գրում են 613, ապա դեռ 1994 թվականին հրատարակված Human Rights Watch իրավապաշտպան հայտնի կազմակերպության տեղեկագրում գրվում է 200:

Իսկ ինչ վերաբերում է Խոջալուի պատասխանատվությունը հայկական կողմի վրա բարդելուն, ապա ինչպես քանիցս նշել ենք, այդ մասին Ադրբեջանի նախկին նախագահ Մութալիբովը հստակ ասել է չեխ լրագրող Դանա Մազալովային տված հարցազրույցում, որ հայերը խաղաղ բնակչության համար միջանցք էին թողել՝ եւ ինքը հրահանգել էր նրանց տեղահանել, սակայն ինչ-որ ուժեր իր դեմ են աշխատել: Այսքանը բավական է պնդելու համար, որ Խոջալուի զոհերի պատասխանատվությունը նույնպես ընկնում է ազերիների վրա:

Վաճառվում է Range Rover Westminster
2003/2004 թթ., մոխրագույն, շարժիչը՝ 4,4 լ., (full):
Մաքսազերծված չէ: Գերազանց վիճակ:
Գինը՝ պայմանագրային:
Հեռ.՝ 096 92 34 15:

ԳՈՎԱԶԴԻ ՀԱՄԱՐ ԶԱՆԳԱՀԱՐԵԼ՝ 58-29-60

Լրատուական գործունեությունն իրականացնող՝ «Ազգ օրաթերթ» ՍՊԸ, Երեւան, Հանրապետության 47: Պետական գրանցման վկայականի համարը՝ 02 Ա N 047261, տրված՝ 18.02.00 թ.:
Թողարկման պատասխանատու, գլխ. խմբ. Յակոբ Աւետիսեան: Տպաքանակ՝ 3000, ստորագրված է տպագրության՝ 28.2.2012, գինը՝ 100 դրամ, տպագրվում է «Նոյեան Տաղան» ՍՊԸ տպարանում՝ Իսահակեան 28: